

U 2321

ՀՀ ՊԵՆԱԿՆԱԿԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՄԻԽԱԵԼԻ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ  
«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և  
գործընթացներ, միջազգային հարաբերություններ»  
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում

**Գիտական խորհրդատու՝** քաղ. գիտ. դոկտոր Ս. Ս. Թորոսյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փ. Ենգոյան  
պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Գ. Ավագյան  
քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Մ. Քեոյան

**Առաջատար կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2018 թ. հունիսի 15-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՒՀ-ի «Քաղաքագիտություն» 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Ուլնեցու փող. 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. մայիսի 14-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
հոգեբանական գիտությունների թեկնածու,  
դոցենտ

*Գրապրոց*

Ձ. Դ. Ասատրյան



**Թեմայի ուսումնասիրության արդիականությունը:** Խորհրդային Միության փլուզումը միանգամայն նոր իրավիճակ ստեղծեց ոչ միայն նախկին սոցիալիստական ճամբարի տարածքում, այլև ամբողջ աշխարհում, քանի որ հանգեցրել էր երկրներ աշխարհակարգի փլուզմանը: Այդ իրավիճակը հնարավորություն ստեղծեց ազդեցության գոտիների վերանայման համար: Մասնավորապես, այն նոր հնարավորություններ ընձեռեց Թուրքիային՝ ակտիվորեն ներթափանցելու Հարավային Կովկաս, որը աշխարհաքաղաքական և տնտեսական մեծ կարևորություն է ներկայացնում Անկարայի համար՝ դիտարկվելով որպես յուրատեսակ կամուրջ դեպի Կենտրոնական Ասիայի թյուրքական նորանկախ պետությունները: Սակայն Թուրքիայի փորձերը՝ հաստատել և լիարժեքորեն ամրապնդել իր աշխարհաքաղաքական ներկայությունը Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում, ծախողվեցին, ինչի գլխավոր պատճառներն էին Թուրքիայի տնտեսական և աշխարհաքաղաքական անբավարար ներուժն ու կիրառած կոշտ մեթոդները, իսկ ավելի ուշ՝ Ռուսաստանի կոշտ հակազդեցությունը նման նկրտումներին<sup>1</sup>: Այդուհանդերձ, Անկարային հաջողվեց լուրջ ազդեցություն հաստատել Վրաստանում, Ադրբեջանի հետ ապահովել շատ սերտ հարաբերություններ: Թեև Հարավային Կովկասի երրորդ ճանաչված պետության՝ Հայաստանի հետ հարաբերությունները շոշափելի արդյունք չեն ունեցել, սակայն ժամանակ առ ժամանակ արձանագրվել են աննախադեպ դրսևորումներ՝ որպես աշխարհաքաղաքական զարգացումների հետևանք: Տարածաշրջանում պատմականորեն մեծ ազդեցություն ունեցող Ռուսաստանի հետ հարաբերություններն ակնհայտորեն կրում են Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական մրցակցության ազդեցությունը:

Նոր իրավիճակում Թուրքիան շարունակեց իր ավանդական ռազմավարությունը՝ աշխատելով առավելագույն օգուտներ քաղել հարափոփոխ իրավիճակներից և իր բարենպաստ աշխարհաքաղաքական դիրքից՝ հաճախ չխուսափելով կտրուկ շրջադարձերից: Դա ակնհայտորեն դրսևորվեց հատկապես Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) իշխանության անցնելուց հետո: Գլխավոր պատճառն այն էր, որ 2000-ականների առաջին տասնամյակը դեռ չբոլորած՝ կտրուկ սրվեց աշխարհաքաղաքական մրցակցությունը Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում, Կասպից և Սև ծովերի ավազաններում: Իրավիճակն էլ ավելի

<sup>1</sup> Торосян Т., Возвращение Турции, - Россия в глобальной политике, №4, 2009г., [http://www.globalaffairs.ru/number/n\\_13636](http://www.globalaffairs.ru/number/n_13636).

էր բարդացնում Եվրամիության քաղաքականությունն՝ ուղղված էներգա-կիրների ներկրման ուղիների և ծագման երկրների բազմազանեցմանը: Ռուսաստանի արտաքին քաղաքականության կտրուկ ակտիվացումն այդ շրջանում Թուրքիայի համար ստեղծեց ինչպես նոր բարդություններ, այնպես էլ համագործակցության նոր հնարավորություններ: Պատահական չէ, որ այս գործընթացները հետխորհրդային ողջ ժամանակահատվածում մնում են քաղաքագիտական շրջանակների ուշադրության կենտրոնում, և անցած ավելի քան քառորդ դարում բազմաթիվ գիտական աշխատանքներ են նվիրվել վերոհիշյալ խնդիրների ուսումնասիրությանը: Այդուհանդերձ, թեման չափազանց բարդ է՝ նկատի ունենալով բազմաթիվ հիմնախնդիրների առնչություններն ու տեղի ունեցող գործընթացներին բազմաբնույթ դերակատարների մասնակցությունը, իրադարձությունների սրընթաց փոփոխություններն ու ձևաչափերի հաճախակի վերանայումները: Ահա թե ինչու թեման արդիական է հատկապես կատարվող իրադարձությունների ու գործընթացների, կիրառվող քաղաքականությունների առավել ամբողջական վերլուծության, Հարավային Կովկասում տարածաշրջանային տերություն դառնալու Թուրքիայի նկրտումների և դրան ուղղված քայլերի, այդ ընթացքում ունեցած ձեռքբերումների ու ձախողումների, ինչպես նաև հոչակված և կիրառվող քաղաքականությունների համադրելիության գնահատման տեսակետից:

Թեմայի համակողմանի ուսումնասիրությունը բացահայտում է Հարավային Կովկասի երկրների նկատմամբ Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները, մարտահրավերներն ու հեռանկարները, ինչպես նաև Թուրքիայի դիրքորոշումը տարածաշրջանում առկա հակամարտությունների, էներգետիկ և տրանսպորտային ռազմավարական նախագծերի վերաբերյալ, մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ մրցակցության և համագործակցության համադրմամբ Թուրքիայի ռազմաքաղաքական և առևտրատնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները:

Արդի աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում հարավկովկասյան տարածաշրջանում Թուրքիայի քաղաքականության տարբեր, երբեմն հակոտնյա դրևորումների պատճառների բացահայտումը կարևոր նշանակություն ունի թե՛ տարածաշրջանային դերակատարների, և թե՛ ուժային կենտրոնների քաղաքական ծրագրերի լիարժեք ընկալման տեսակետից:

ԱԶԿ-ի իշխանության անցնելուց հետո Թուրքիայում մշակվեց արտաքին քաղաքականության նոր հայեցակարգ, որը նպատակաուղղված էր տարածաշրջանային տերության կարգավիճակի հասնելուն: Այդ տեսանկյունից Թուրքիայի քաղաքականությունը առավել ակտիվ է հատկապես Հարավային Կովկասում, որն Անկարայի նկրտումների համար առավել մեծ հնարավորություններ էր ընձեռում ԽՍՀՄ փլուզման պատճառով, դեպի Եվրոպա էներգակիրների տեղափոխման ուղիների զարգացման հեռանկարներով, ինչպես նաև ռուսական ազդեցության զգալի նվազեցման առումով:

Այսպիսով, ակներև է ատենախոսության թեմայի արդիականությունը: Հետազոտությունը հնարավորություն է ընձեռում ինչպես Թուրքիայի ներքին զարգացումների պատճառների ու հեռանկարների ճիշտ ընկալման, այնպես էլ տարածաշրջանում ծավալվող աշխարհաքաղաքական մրցակցության հնարավոր զարգացումների, Կասպից ծովի ավազանի էներգակիրների տեղափոխության իրական ուղիների գնահատման ու կանխատեսման, տարածաշրջանի երկրների զարգացման և տարբեր ձևաչափերով համագործակցության արդյունավետության գնահատման և պլանավորման համար:

**Հետազոտության գիտական մշակվածության աստիճանը:** Հարավային Կովկասը, սկսած օսմանյան շրջանից, եղել է Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը: Վերջին քառորդ դարում Թուրքիայի արտաքին քաղաքական հիմնական գերակայությունները, նրա տեսական ու գաղափարական ուղղությունները, «Նոր օսմանականության» գաղափարախոսությունն ակտիվ գիտական ուսումնասիրության առարկա են եղել<sup>3</sup>:

<sup>2</sup> Davutoğlu A., *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, İstanbul, 2001.

<sup>3</sup> Oran B., *The Turkish Approach to Transcaucasia and Central Asia*, in *Ole Hoiris and Sefa Martin Yürükel, eds., Contrasts and solutions in the Caucasus*, Aarhus: Aarhus University Press, 1998; Taspınar Ö., *Turkey's Middle East Policies Between Neo-Ottomanism and Kemalism*, Carnegie Papers, Number 10, September 2008; Taspınar Ö., *The three strategic visions of Turkey*, - US-Europe Analysis Series, Number 50, March 8, 2011, Center on the United States and Europe at Brookings; Tüfekçi Ö., *The Foreign Policy of Modern Turkey: Power and the Ideology of Eurasianism*, I. B. Tauris, 2017; Tüfekçi Ö., Hüseyin Tabak, Erman Akilli, *Eurasian Politics and Society: Issues and Challenges*, Cambridge Scholars Publishing, 2017; Davutoğlu A., *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, İstanbul, 2001; Özey R., *Dünya Platformunda Türk dünyası*, İstanbul, 1999; Torosyan T., Yardanyan A., *The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland*, Geopolitics, 2015, 20, 3; Çarkoğlu A., Hale M. W., *The Politics of Modern Turkey: Modern Turkey's foreign policy*, Indiana, Routledge, 2008; Laçiner S., *Ozalizm (Neo-Ottomanism): An Alternative in Turkish Foreign Policy?*, *Yonetim Bilimleri Dergisi* (1:1-2),-

ԽԱՎՄՈՒՄ փլուզումից հետո Թուրքիայում սկսվեց ակտիվորեն քննարկվել նոր արտաքին քաղաքականություն մշակելու անհրաժեշտությունը: Թուրքիայի արտաքին քաղաքական գերակայությունների, նոր աշխարհակարգի պայմաններում պետության դերակատարության վերաբերյալ առկա էին տարբեր դիրքորոշումներ: Մասնավորապես, առավել արմատական ուղղության՝ պանթուրքիզմի և թյուրքական աշխարհի համախմբման դիրքորոշման կողմնակից Ռ. Օզեյը էապես արժևորում էր «թյուրքական աշխարհի» դերը և աշխարհաքաղաքական նշանակությունը՝ առանցքային տեղ հատկացնելով Թուրքիայի դերակատարությանը և կարևորությանը այդ համախմբման գործընթացում<sup>4</sup>: Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ մեկ այլ ուղղության՝ արևմտյան կողմնորոշման կողմնակից Օ. Օկտավը Թուրքիայի քաղաքական գերակայությունների մեջ առաջնահերթ է համարում Արևմուտքի հետ հարաբերությունները, որին նպաստող գործոն էր համարում Թուրքիայում ուժի և ուժի սպառնալիքի կիրառման դիրքորոշման թուլացումը, և դրան հակառակ՝ դիվանագիտական մոտեցման, երկխոսության, միջազգային իրավունքի կիրառման վերաբերյալ կարծիքի ամրապնդումը<sup>5</sup>: Թուրքիայի եվրասիական գաղափարախոսության հետևորդներից մեկը՝ Օ. Թուֆեկչին համարում է, որ վերջին երեք տասնամյակում եվրասիական գաղափարախոսությունը եղել է

Journal of Administrative Sciences, 2003-2004; **Murinson A.**, Turkish Foreign Policy in the Twenty-First Century, The Begin-Sadat Center for Strategic Studies, Bar-Ilan University, Mideast Security and Policy Studies, No 97, 2012; **Bal I.**, The Turkish Model and the Turkic Republics.- Perceptions: Journal of International Affairs, September-November 1998, Volume III, Number 3; **Pipes D.**, The Event of Our Era, New York: Council on Foreign Relations Press, 1994; **Fuller G.**, Turkey Faces East: New Orientations toward the Middle East and the Old Soviet Union, Santa Monica, CA: Rand, 1997; **Anderson P.**, After Kemal.- London Review of Books, Vol. 30, No. 18, 25 September 2008; **Ataman M.**, Leadership change: Özal Leadership and Restructuring in Turkish Foreign Policy.- Alternatives: Turkish Journal of International Relations, Vol.1, No.1, (Spring 2002; **Küçükcan T.**, **Küçükkeleş M.**, European Perceptions of Turkish Foreign Policy.- SETA Policy Report, No 10, April, 2012; **Oktav Ö.**, Turkey in the 21st Century. Quest for a New Foreign Policy, Yıldız Technical University, Turkey, Routledge, 2011; **Tabak H.**, Ozgur Tufekci, Alessia Chiriatti, Domestic and Regional Uncertainties in the New Turkey, Cambridge Scholars Publishing, 2017; **Park B.**, Modern Turkey: People, State and Foreign Policy in a Globalised World, Routledge, 2012; **Թորոսյան Տ.**, Թուրքիայի արտաքին քաղաքականության Նոր ակտիվիզմի շրջանի երկրորդ փուլը.- Լրաբեր հասարակական գիտությունների, 2010թ., 1-2, էջ 1-13:

<sup>4</sup> **Özey R.**, Dünya Platformunda Türk Dünyası, Aktif Yayınlevi, İstanbul, 1999.

<sup>5</sup> **Oktav Ö.**, Turkey in the 21st Century. Quest for a New Foreign Policy, Yıldız Technical University, Turkey, Routledge, 2011.

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում և այսօր էլ շարունակում է ազդեցություն ունենալ<sup>6</sup>:

1990-ական թվականներին Թուրքիայի արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը «Թուրքական մոդել» գաղափարի իրագործումն էր: Այն ստացավ Արևմուտքի աջակցությունը՝ նպատակ ունենալով մի կողմից թուլացնել Ռուսաստանի և Իրանի ներգրավվածությունը հետխորհրդային տարածաշրջանում, մյուս կողմից՝ այդ մոդելը կիրառելի դարձնել նորանկախ մահմեդական հանրապետություններում<sup>7</sup>:

ԱԶԿ-ի իշխանության տարիներին Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության հիմքում ընկած է «Նոր օսմանականության» գաղափարախոսությունը և «Ռազմավարական խորություն» տեսությունը, որի գլխավոր տեսաբաններից էր նախկին ԱԳ նախարար և վարչապետ Ա. Դավլաթօղլուն: Նա առաջարկում էր հարևան երկրների հետ հարաբերությունները կառուցել 5 հիմնական սկզբունքների հիման վրա, ինչպես նաև նախանշում էր տարածաշրջանային քաղաքականության նոր ուղեմիջոցներն ու չափանիշները<sup>8</sup>: Դավլաթօղլուն անդրադառնում էր նաև Հարավային Կովկասին՝ հիմնավորելով, որ Թուրքիայի հետ ցամաքային սահման ունեցող երեք կարևոր տարածաշրջաններից Հարավային Կովկասն առանձնահատուկ նշանակություն ունի Թուրքիայի համար: Թեև նա մերժում էր իր տեսությունը որպես «նոր օսմանականության» դրսևորում դիտարկող մոտեցումները, սակայն «Ռազմավարական խորություն» տեսության խորքային ուսումնասիրությունը «նոր օսմանականության» գաղափարախոսության հետ մի շարք էական ընդհանրություններ է բացահայտում<sup>9</sup>: Ա. Մուրինսոնը նույնպես գտնում էր, որ «Նոր օսմանականության» առանցքային գաղափարներն են իսլամն ու Թուրքիայի կայսերական պատմությունը՝ որպես արտաքին քաղաքականության ուղեցույց, որի արդյունքում մերժվում են երկրի աշխարհիկ քննադատական ժառանգությունը և հանրապետական դիվանագիտության ավանդույթները<sup>10</sup>:

<sup>6</sup> **Tüfekçi Ö.**, The Foreign Policy of Modern Turkey: Power and the Ideology of Eurasianism, I. B. Tauris, 2017.

<sup>7</sup> **Bal I.**, The Turkish Model and the Turkic Republics.- Perceptions: Journal of International Affairs, September-November 1998, Volume III, Number 3.

<sup>8</sup> **Davutoğlu A.**, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, 2001.

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> **Murinson A.**, Turkish Foreign Policy in the Twenty-First Century, The Begin-Sadat Center for Strategic Studies, Bar-Ilan University, Mideast Security and Policy Studies, No 97, 2012.

Օ. Թաշպինարի գնահատականները «Նոր օսմանականությանը» նույնպես մոտ են Դավութբազյանի տեսակետներին: Թաշպինարը նշում է, որ այդ գաղափարախոսությունն ունի երեք ընդգծված գործոն՝ ա) Օսմանյան կայսրության մաս կազմող նախկին երկրներին նոր օսմանականության դաշտ բերել «փափուկ» և հավասարակշռված քաղաքականությամբ, բ) ակտիվ դիվանագիտական և տնտեսական քաղաքականություն վարելով՝ վերածվել տարածաշրջանի առանցքային երկրի, գ) նոր օսմանականության քաղաքականության հետևանքով Արևմուտքից «պոկել» նախկին օսմանյան կայսրության մաս կազմած մահմեդական բնակչություն ունեցող երկրները<sup>11</sup>:

Այդուհանդերձ, լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտությունն ակնհայտ է հատկապես Հարավային Կովկասում տարածաշրջանային տերություն դառնալու նկրտումների և դրան հասնելու Թուրքիայի փորձերը գնահատելու, «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության տարիներին Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ձեռքբերումներն ու ձախողումները վերլուծելու, ինչպես նաև այդ քաղաքականության հետևանքով ձևավորված իրավիճակի և զարգացման հեռանկարների վերաբերյալ գանհատական տալու տեսանկյունից: Հարկ է նաև ավելի լիարժեք վերլուծել Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսական ուղղությունների և գործնական քայլերի համեմատության արդյունքները:

Թուրքիայի հարավկովկասյան տարածաշրջանային քաղաքականության մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն թուրք-ռուսական հարաբերությունները: Վերջին 25 տարիների ընթացքում թուրք-ռուսական առևտրատնտեսական, էներգետիկ և ռազմաքաղաքական հարաբերություններին, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նախագծերի շուրջ երկու երկրների միջև փոխհարաբերություններին, համագործակցությանն ու մրցակցությանը անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ<sup>12</sup>:

<sup>11</sup> Taşpınar Ö., Turkey's Middle East Policies Between Neo-Ottomanism and Kemalism, Carnegie Papers, Number 10, September 2008.

<sup>12</sup> Selçuk H., Türkiye-Rusya Ekonomik İlişkileri, İstanbul, Tasam Yayınları 2005; Torumtay N., Değişen Stratejilerin Odağında Türkiye. İstanbul: AD Yayıncılık, 1996; Demir S., Turkey's Foreign Policy and Security Perspectives in the 21st Century: Prospects and Challenges, Florida, Brown Walker Press, 2016; Gürtuna A., Turkish-Russian Relations in the Post Soviet Era: From Conflict to Cooperation, Thesis of Master in International Relations submitted to The Graduate School of Social Sciences, Middle East Technical University, January 2006; Kurban V., Russian-Turkish Relations from the First World War to the Present, Cambridge Scholars Publishing, 2017; Torosyan T., The

1990-ականների սկզբին, երբ Ռուսաստանը բախվել էր հետխորհրդային ներքաղաքական տրանսֆորմացիայի գործընթացով պայմանավորված բազմաթիվ մարտահրավերների, պաշտոնական Անկարան համարեց, որ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ձևավորվել է բարենպաստ իրավիճակ ԽՍՀՄ փլուզումով առաջացած արտաքին ազդեցության վակուումը լրացնելու և այդ տարածաշրջաններն իր գերակա ազդեցության գոտիների վերածելու համար<sup>13</sup>:

Բ. Արասը, անդրադառնալով թուրք-ռուսական համագործակցության և մրցակցության հիմնական ասպեկտներին, թուրք-արևմտյան լարված հարաբերությունները դիտում է որպես լավ հնարավորություն թուրք-ռուսական հարաբերությունների հետագա խորացման համար: Ըստ հեղինակի՝ Թուրք-ռուսական մերձեցմանը զգալիորեն նպաստեց Թուրքիայի ինքնու-

Return of Turkey, Russia in Global Affairs, 2009, 3, July-September; Սաֆրաստյան Ռ., Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհաստանագիտական գիտադաշն.- 21-րդ դար, թիվ 4 (10), 2005; Hovsepian L., Turkey and Russia: Military-Technical Cooperation Today and Tomorrow, - Central Asia and The Caucasus, Volume 12, Issue 3, 2011; Büyükkakinci E., "Türk-Rus İlişkilerinin Değerlendirilmesi: Güvenlik Sorunsalından Çok Boyutlu Derinliğe Geçiş", Der E. Büyükkakinci & E. Bacanlı., Sovyetler Birliği'nin Dağılmasından Yirmi Yıl sonra Rusya Federasyonu: Türk dilli Halklar ve Türkiye ile İlişkiler, Ankara, Atatürk Kültür Merkezi Yay, 2012; Aras B., Türkiye ve Rusya Federasyonu: Çok boyutlu ortaklık.- SETA Analiz, Sayı: 10, Ağustos 2009; Коджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период.- М., «Русская панорама», 2004; Мамедова Н.М., Россия и Турция: взаимные интересы, возможности и противоречия. / Под редакцией Аваткова В.А., Дружиловского С.Б., Федорченко А.В. // Российско-турецкие отношения: 2002-2012 гг. - М., МГИМО, 2013; Федорченко А.В. Россия - Турция: преодолевая экономические и политические противоречия / Под редакцией Аваткова В.А., Дружиловского С.Б., Федорченко А.В. // Российско-турецкие отношения: 2002-2012 гг. - М., МГИМО, 2013; Арбатова Н., Москва и Анкара в многополярном мире, Военно-промышленный курьер, № 26 (443), 04.07.2012; Tekin A., Williams A. P., Geopolitics of the Euro-Asia Energy Nexus: The European Union, Russia and Turkey (New Security Challenges), Palgrave Macmillan, 2011; Öniş Z. and Yilmaz Ş., Turkey and Russia in a shifting global order: cooperation, conflict and asymmetric interdependence in a turbulent region.- Third World Quarterly, Volume 37, Issue 1, 2016; Torbakov I., Making Sense of the Current Phase of Turkish-Russian relations.- Jamestown Foundation, Occasional Papers, October 2007; Sanders D., Maritime Power in the Black Sea, Routledge, United Kingdom, 2014; Иванова И.И., Российско-турецкие политические отношения в начале XXI века/ Под редакцией Аваткова В.А., Дружиловского С.Б., Федорченко А.В. // Российско-турецкие отношения: 2002-2012 гг. - М., МГИМО, 2013; Klieman A., Great Powers and Geopolitics: International Affairs in a Rebalancing World, Springer, 2015.

<sup>13</sup> Torosyan T., The Return of Turkey. Ankara in the South Caucasus after the Russian-Georgian War.- Russia in Global Affairs, Vol. 7, No. 3, July - September 2009. Թորոսյան Տ., Թուրքիայի արտաքին քաղաքականության Նոր ակտիվիզմի շրջանի երկրորդ փուլը: Լրաբեր հասարակական գիտությունների, 2010թ., 1-2, էջ 1-13:

րույն որոշումներ կայացնելու ունակությունը՝ չենթարկվելով Արևմուտքի ուղղորդումներին<sup>14</sup>:

Թուրքիայում ԱՂԿ-ի իշխանության գալուց հետո թուրք-ռուսական առևտրային ապրանքաշրջանառությունը շեշտակիորեն աճեց՝ 2008թ. Հասնելով 38 մլրդ դոլարի, որի շնորհիվ 2008թ. Ռուսաստանը կարողացավ դառնալ Թուրքիայի թիվ մեկ առևտրային գործընկերը՝ շրջանցելով Գերմանիային<sup>15</sup>: Չնայած էներգետիկ ոլորտում թուրք-ռուսական սերտ համագործակցությանը՝ Թուրքիան և Ռուսաստանը նաև մրցակիցներ են էներգակիրների արտահանման ուղիների հարցում:

Ա. Թեքինը, անդրադառնալով էներգակիրների աճող պահանջարկին և դրանց արտահանման ուղիների շուրջ ԵՄ, Ռուսաստանի և Թուրքիայի միջև առկա խնդիրներին, մեծ տեղ է հատկացնում ԵՄ-ի էներգետիկ անվտանգության ապահովման գործում և Ռուսաստանը շրջանցող էներգակիրների տարանցիկ ուղիների վերահսկողության հարցում Թուրքիայի դերակատարությանը: Նա կարծում է, որ, որ էներգետիկ ոլորտում թուրք-ռուսական մրցակցության համատեքստում Ռուսաստանի վերջնական ռազմավարական նպատակն էր «գերիշխող դիրք գրավել ինչպես եվրոպական էներգետիկ շուկայում, այնպես էլ՝ Կասպից ծովից էներգակիրների արտահանման բնագավառում»<sup>16</sup>:

Երկու երկրների միջև առկա էին նաև էական տարածայնություններ, հատկապես տարածաշրջանում ընթացող հիմնական հակամարտությունների լուծմանն ուղղված մոտեցումներում: Մասնավորապես, Զ. Օնիսը և Շ. Յըլմազը գտնում էին, որ Թուրքիան կհայտնվի բավականին անբարենպաստ վիճակում, եթե Հարավային Կովկասում առկա հակամարտությունների, ինչպես նաև Հայաստանի հետ նրա երկարատև «հակամարտությունը» կարգավորելիս հանդես գա միայնակ կամ համագործակցի Ռուսաստանի հետ, այլ ոչ թե գործի ԵՄ-ի հետ համատեղ որպես թեկնածու երկիր և պոտենցիալ անդամ<sup>17</sup>:

<sup>14</sup> Aras B., Türkiye ve Rusya Federasyonu: Çok Boyutlu Ortaklık, Ankara, SETA Analiz, Sayı: 10, 2009.

<sup>15</sup> Özertem H., Has K., Demirtepe T., Özdal H., Turkish-Russian Relations in The Post-Cold War Period: Current Dynamics, Future Prospects, - USAK Center for Eurasian Studies, USAK Report No: 13-06, 2013.

<sup>16</sup> Tekin A., Williams A. P., Geo-Politics of the Euro-Asia Energy Nexus: The European Union, Russia and Turkey (New Security Challenges), Palgrave Macmillan, 2011.

<sup>17</sup> Öniş Z. and Yılmaz Ş., Turkey and Russia in a shifting global order: cooperation, conflict and asymmetric interdependence in a turbulent region, - Third World Quarterly, Volume 37, Issue 1, 2016.

Է. Կոգանը, անդրադառնալով թուրք-ռուսական հարաբերություններին, դրանց զարգացման միտումներին և առկա հիմնախնդիրներին, հանգում է այն կարծիքին, որ թուրք-ռուսական համագործակցության հեռանկարը ռազմավարական գործընկերության մակարդակից դուրս է: Հեղինակը միևնույն ժամանակ ընդգծում է, որ չնայած Թուրքիան լրջորեն մտախոզված էր նաև Աբխազիայում և Հարավային Օսիայում Ռուսաստանի վարած քաղաքականությունից, այնուհանդերձ նա բացահայտ չէր պայքարում Ռուսաստանի կողմից Աբխազիային ցուցաբերվող զգալի աջակցության դեմ՝ ցուցաբերելով հանդուրժողականություն ռուսական քաղաքականության նկատմամբ<sup>18</sup>:

Ն. Մամեդովան նշում է, որ Հարավային Կովկասում թուրք-ռուսական հարաբերություններում լարվածության հիմնական դրդապատճառներից էր Թուրքիայի տնտեսական դիրքերի ամրապնդումը Ադրբեջանում և Վրաստանում, այդ թվում նաև ի հաշիվ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի, որը նվազեցնում էր տարածաշրջանում Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը<sup>19</sup>:

Անդրադառնալով թուրք-ռուսական քաղաքական տարածայնություններին՝ Ն. Արբատովայի կարծիքով դրա վառ ապացույցն էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Սիրիայի դեմ պատժամիջոցներ կիրառելու բանաձևի քննարկման ժամանակ ստեղծված իրավիճակը, երբ Թուրքիան միացավ Արևմուտքին և Արաբական երկրների լիգային՝ հակադրվելով Ռուսաստանի դիրքորոշմանը<sup>20</sup>: Ս. Դեմիրը անդրադառնում է թուրք-ռուսական ժամանակակից խնդիրներին, դրանց զարգացման հեռանկարներին ու մարտահրավերներին, ինչպես նաև վերլուծում է ուկրաինական ճգնաժամում, հատկապես, Դրիմի հարցում Ռուսաստանի քաղաքականությունը և Թուրքիայի որդեգրած դիրքորոշումը<sup>21</sup>: Ֆ. Քելքիթին ներկայացնում է կովկասյան և այլ տարածաշրջաններում թուրք-ռուսական մրցակցության և գործակցության հիմնական ասպեկտներն ու ոլորտները, սուր

<sup>18</sup> Kogan E., Turkish-American Strategic Partnership versus Turkish-Russian Partnership without Strategy, - Sozialwissenschaftliche Schriftenreihe Reihe Studien, Wien: Internationales Institut für Liberale Politik, 2009.

<sup>19</sup> Мамедова Н.М., Россия и Турция: взаимные интересы, возможности и противоречия, / Под редакцией Аваткова В.А., Дружиловского С.Б., Федорченко А.В. // Российско-турецкие отношения: 2002-2012 гг. - М., МГИМО, 2013.

<sup>20</sup> Арбатова Н., Москва и Анкара в многополярном мире, Военно-промышленный курьер, № 26 (443), 04.07.2012.

<sup>21</sup> Demir S., Turkey's Foreign Policy and Security Perspectives in the 21st Century: Prospects and Challenges, Florida, Brown Walker Press, 2016,

դիմակայության փուլերը՝ մեծ տեղ հատկացնելով Թուրքիայի նշանակությանը եվրասիական տարածաշրջանում և նրա հնարավորությունները թուրք-ռուսական մրցապայքարում<sup>22</sup>:

Այդուհանդերձ, այսօր ևս նոր հետազոտություններ իրականացնելու անհրաժեշտություն կա հատկապես թուրք-ռուսական հարաբերությունների զարգացման փուլերի և դրանց առանձնահատկությունների, հարավկովկասյան և հարևան տարածաշրջաններում թուրք-ռուսական մրցակցության ու համագործակցության առանձնահատկությունների, ինչպես նաև առկա մարտահրավերների ու զարգացման հեռանկարների վերաբերյալ:

Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքակրթության վրա էական ազդեցություն են ունեցել հարաբերությունները Ադրբեջանի հետ: Վերջին քառորդ դարում թուրք-ադրբեջանական հարաբերությունների զարգացման փուլերի, համագործակցության ոլորտների ուսումնասիրությանը անդրադարձել են տարբեր երկրներ ներկայացնող մեծ թվով հետազոտողներ<sup>23</sup>:

Մ. Այդինը հանգամանորեն անդրադարձել է Հարավային Կովկասում Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններին, հարավկովկասյան երկրների հետ երկկողմ և բազմակողմ հարաբերություններին՝ Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության մեջ

<sup>22</sup> Kelkitli F. A., Turkish-Russian Relations: Competition and Cooperation in Eurasia, Routledge, 2017.

<sup>23</sup> Aydin M., Non-traditional Security Threats and Regional Cooperation in the Southern Caucasus, Amsterdam, 2011; Aydin M., Turkish Foreign Policy: Framework and Analysis, Ankara, Stratejik Araştırmalar Merkezi, 2005; İpek P., Azerbaijan: oil boom and challenges, in Turkey's Neighborhood, Mustafa Kibaroglu (ed.) Ankara: Foreign Policy Institute, 2008; İsmayilov M. and Graham A. N., Turkish-Azerbaijani Relations: One Nation—Two States?, Routledge, 2016; Uzer U., Identity and Turkish Foreign Policy: The Kemalist Influence in Cyprus and the Caucasus, I. B. Tauris, 2010; Goldenberg S., Pride of Small Nations: The Caucasus and Post-Soviet Disorder, Zen Books, London, 1994.; Migdalovitz C., Armenia-Azerbaijan Conflict.- CRS Issue Brief, Congressional Research Service, The Library of Congress, Updated December 4, 2001; Ավազյան Ա., Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ.- Հայկական բանակ, 3(49), 2006, Օվսեյան Լ., Иванов В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии. Динамика и основные тенденции развития, Институт политических исследований ГНКО, Ереван, 2010; Henze B. P., Turkey's Caucasian Initiatives, Foreign Policy Research Institute, 2001; Cornell E. S., The Nagorno-Karabakh Conflict.- Uppsala University: Department of East European Studies, 1999; Митлев В. Г., Внутривнутриполитическое развитие независимого Азербайджана в свете его геополитического положения. Независимый Азербайджан: новые ориентиры, М., 2000; Гаджиев К.С., Геополитика Кавказа.- М., «Международные Отношения», 2003; Chorbajian L., Donabedian P. and Mutafian C., The Caucasian Knot: The History of Geopolitics of Nagorno- Karabagh.- London, Zed Books, 1994.

Ադրբեջանին հատկացնելով մեծ դերակատարություն: Միևնույն ժամանակ, նա մեծապես կարևորել է համագործակցությունը տարածաշրջանում, որի հիմնական խոչընդոտներն էին առկա հակամարտություններն ու մարտահրավերները<sup>24</sup>: Մ. Իսմայիլովը ներկայացնում է թուրք-ադրբեջանական հարաբերությունների զարգացման հեռանկարները, համագործակցության առանցքային ոլորտները, ներքին և արտաքին մարտահրավերները՝ վերլուծելով երկու երկրների պատմական, քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, գաղափարական և միջազգային հենքերը, ինչպես նաև տարածաշրջանում թուրք-ադրբեջանական դաշինքի դերն ու նշանակությունը<sup>25</sup>:

Ա. Ավազյանը հանգամանորեն ներկայացնում է դարաբաղյան հակամարտության տարիներին Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերած ռազմական և ռազմատեխնիկական աջակցության հիմնահարցերին՝ մատնանշելով թուրք սպաների և զեներալների ակտիվ մասնակցությանը ադրբեջանական բանակի ձևավորման գործընթացում<sup>26</sup>: Ք. Միզդալովիցը անդրադառնում է Արցախի խնդրի ծագման պատմությանը, հակամարտող կողմերի դիրքորոշումներն և ակնկալիքներն, ինչպես նաև Թուրքիայի դիրքորոշմանը՝ վերջինիս ներկայացնելով որպես Ադրբեջանին եղբայրակից և աջակից կողմ<sup>27</sup>:

Ու. Ուզբերը Ղարաբաղյան հիմնախնդրի ներկայացման գործում հանդես է գալիս ադրբեջանամետ դիրքորոշմամբ: Միաժամանակ, Ղարաբաղյան հակամարտությունում Թուրքիայի անմիջական ներգրավված չլինելը և հակամարտության կողմ չհանդիսանալը նա պայմանավորում է առաջին հերթին երկրի ռազմավարական շահերով՝ Ռուսաստանի հետ հակամարտությունից խուսափելու նպատակադրությամբ<sup>28</sup>: Վ. Հուսեյնովը, անդրադառնով կասսիական էներգակիրների՝ Ռուսաստանը շրջանցող արտահանման ուղիների հարցին, այդ գործում մեծ տեղ էր հատկացնում Ադրբեջանին և թուրք-ադրբեջանական համագործակցությանը: Նա համարում

<sup>24</sup> Aydin M., Non-traditional Security Threats and Regional Cooperation in the Southern Caucasus, Amsterdam, 2011; Aydin M., Turkish Foreign Policy: Framework and Analysis, Ankara, Stratejik Araştırmalar Merkezi, 2005.

<sup>25</sup> İsmayilov M. and Graham A. N., Turkish-Azerbaijani Relations: One Nation—Two States?, Routledge, 2016.

<sup>26</sup> Ավազյան Ա., Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ.- Հայկական բանակ, 3 (49), 2006:

<sup>27</sup> Migdalovitz C., Armenia-Azerbaijan Conflict.- CRS Issue Brief, Congressional Research Service, The Library of Congress, Updated December 4, 2001.

<sup>28</sup> Uzer U., Identity and Turkish Foreign Policy: The Kemalist Influence in Cyprus and the Caucasus, I. B. Tauris, 2010.

էր, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման վերաբերյալ համաձայնագիրը թուրք-ադրբեջանական տանդեմի քաղաքական և տնտեսական լուրջ ձեռքբերումն էր և երկկողմ համագործակցության վստահության գրավականը<sup>29</sup>:

Այնուամենայնիվ, հավելյալ հետազոտությունների անհրաժեշտությունն է զգացվում, մասնավորապես, Հարավային Կովկասում Թուրքիայի ուժ-մավարական և աշխարհատնտեսական նախագծերում Ադրբեջանի ունեցած դերակատարության և տարածաշրջանային զարգացումների վրա թուրք-ադրբեջանական համագործակցության ազդեցությունը, ինչպես նաև Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռանկյունու հետապնդած շահերը և տարածաշրջանային զարգացումների վրա դրանց անդրադարձը բացահայտելու համար:

Թուրք-վրացական հարաբերությունները միշտ էլ մեծ կարևորություն են ներկայացրել Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում: Վրաստանի հետ հարաբերությունների ամրապնդմամբ Անկարան ցանկանում էր մեծացնել իր ազդեցությունն այդ երկրում և առավել արդյունավետ քաղաքականություն իրականացնել հարավկովկասյան տարածաշրջանում: Թուրք-վրացական հարաբերությունների զարգացման գործընթացին, ռազմաքաղաքական և առևտրատնտեսական համագործակցությանը, վրաց-արխազական հակամարտությունում Թուրքիայի դերակատարությանը և երկկողմ հարաբերություններում առկա այլ հիմնախնդիրներին անդրադարձել մեծ թվով հետազոտողներ<sup>30</sup>:

<sup>29</sup> Гусейнов В., Каспийская нефть, экономика и геополитика, М. 2002.

<sup>30</sup> Karaosmanoğlu A., Turkey Objectives in the Caspian Region, The Security of the Caspian Region, Oxford: University Press, 2001; Metin S., Kafdağı'nın Bu Yüzü: Türkiye'deki Kafkas Kökenliler, İstanbul, 1999; Гоксел Д., Кавказская политика Турции, Кавказское соседство: Турция и Южный Кавказ. Ереван: Институт Кавказа, 2008; Tütüncü M., The Caucasus Policy of Turkey (1990-1997): Caucasus: War and Peace: New World Disorder in Caucasus, Haarlem: SOTA, 1998; Տեր-Մաթևոսյան Վ., Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում. - «21-րդ դար», թիվ 1 (65), 2016թ.: Cecire M. H., The Merchant Hegemon: Georgia's Role in Turkey's Caucasus System // in Georgian Foreign Policy: The quest for Sustainable Security, eds. K. Kakachia and M. Cecire//, Tbilisi, Konrad Adenauer Stiftung.V, 2013; Ekedahl M. C. and Goodman A. M., The Wars of Eduard Shevardnadze, Pennsylvania, 1997; Mikhelidze N., After the 2008 Russia-Georgia war: Implications for the wider Caucasus and prospects for Eastern involvement in conflict resolution, - Istituto Affari Internazionali; Winrow M. G., Turkey and the Caucasus: Domestic Interests and Security Concerns. London, Royal Institute of International Affairs, 2000; Wennmann A., Renewed Armed Conflict in Georgia? Options For Peace Policy in a New Phase of Conflict Resolution, - PSIO Occasional Paper No.3 (2006), Graduate Institute of International Studies, Geneva, May 2006; Арешев А., Южный Кавказ: возрастание

Տ. Ջերմանը ներկայացրել է Հարավային Կովկասը որպես մեկ տարածաշրջան՝ իր բաժանարար գծերով հանդերձ: Տարածաշրջանի աշխարհագրական գործոնը, ըստ հեղինակի, իր ազդեցությունն է թողել հարավկովկասյան երեք երկրների արտաքին քաղաքական կողմնորոշումների վրա: Տարածաշրջանի երկրների նկատմամբ տարբեր մոտեցումներն ակնառու դրսևորվեցին 2008թ. հնգօրյա պատերազմի շրջանում և դրան հաջորդած քաղաքական զարգացումների ընթացքում: Նա մեծ ուշադրություն է հատկացրել թուրք-վրացական հարաբերությունների գնահատմանը պատերազմից առաջ և դրան հաջորդած շրջանում<sup>31</sup>: Ն. Գյոքսելը, անդրադառնալով Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության որոշ ասպեկտներին, նշում է, որ Թուրքիան մի կողմից հանդես գալով Վրաստանի տարածքային ամբողջականությանն աջակցելու հայտարարությամբ, մյուս կողմից՝ օգնության շտապող ԱՄՆ ռազմանավերի առջև փակելով թուրքական նեղուցները, ցանկանում էր ոչ միայն պահպանել իր դիրքերը տարածաշրջանում, այլև ցույց տալ ԱՄՆ-ին իր նշանակալի դերակատարությունը և որոշակի ինքնուրույնությունը<sup>32</sup>: Ներկայացնելով 2008թ. 5-օրյա պատերազմից հետո ռուս-վրացական լարված հարաբերությունները՝ Ն. Միխելիձեն նշում է, որ չնայած Թուրքիայի ջանքերին, Վրաստանը հրաժարվում էր մասնակցել ՌԴ-ի հետ համատեղ որևէ նախաձեռնության, քանի դեռ իր տարածքում գտնվում էին ռուսական զորքեր<sup>33</sup>: Ա. Ջոդիկը ներկայացնում է Վրաստանի նկատմամբ թուրքական փափուկ ուժի կիրառման մեխանիզմները, դրանց քաղաքական և մշակութային ազդեցությունը, ինչպես նաև այդ քաղաքականությանը հակադրվող տարածաշրջանային այլ դերակատարների՝ Ռուսաստանի և Իրանի քայլերը: Հետազոտությունը բացահայտում է ինչպես Վրաստանի, այնպես էլ ամբողջ տարածաշրջանի նկատմամբ հարևան Թուրքիայի, Ռուսաստանի և Իրանի քաղաքականության ու մոտեցումների տարբերությունները, շա-

региональной роли Турции и Ирана, Под общей редакцией А.А. Языковой, Черноморье-Каспий: Поиск новых форматов безопасности и сотрудничества, Москва, РАН, Институт Европы, 2011; Иванов В., Основные контуры турецко-грузинского военно-политического сотрудничества: динамика и перспективы развития, - «Թուրքազիտական և օսմանազիտական հետազոտություններ», - երևան, հատոր 6, 2009.

<sup>31</sup> German T., Regional Cooperation in the South Caucasus: Good Neighbours or Distant Relatives?, Routledge, 2012.

<sup>32</sup> Гоксел Д., Кавказская политика Турции, Кавказское соседство: Турция и Южный Кавказ. Ереван: Институт Кавказа, 2008.

<sup>33</sup> Mikhelidze N., After the 2008 Russia-Georgia war: Implications for the wider Caucasus and prospects for Eastern involvement in conflict resolution, - Istituto Affari Internazionali, 2009.

հերի հակադրությունը<sup>34</sup>: Ա. Պետերսենը ներկայացնում է Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև էներգետիկ, տրանսպորտային և հաղորդակցության ոլորտներում համագործակցության զարգացման ընթացքը, տարբեր տարածաշրջանային նախագծերում մասնակցությունն ու համագործակցությունը<sup>35</sup>: Ս. Բրեննը, անդրադառնալով 2008թ. 5-օրյա պատերազմից պատերազմից հետո թուրք-վրացական և թուրք-ուսական հարաբերություններին, նշում է, որ Թուրքիան հայտնվել էր լուրջ երկընտրանքի առջև՝ մի կողմից ձգտելով չխաթարել իր տնտեսական կարևոր գործընկեր Ռուսաստանի հետ հարաբերությունները, իսկ մյուս կողմից՝ հանդես գալով Վրաստանի տարածքային ամբողջականության դիրքերից: Ըստ հեղինակի՝ պատերազմից հետո Թուրքիայի դարձավ Վրաստանի խոշորագույն առևտրային գործընկերը, միևնույն ժամանակ ՆԱՏՕ-ի անդամ միակ երկիրն էր, որը կապեր էր պահպանում Արևմտահայի հետ<sup>36</sup>:

Բայցևայնպես, լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն ակնհայտ է նաև Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդմանն ուղղված գործընթացում Վրաստանին վերապահված դերակատարության, արդի փուլում թուրք-վրացական հարաբերությունների առանձնահատկությունների, զարգացման փուլերի, դրան նպաստող գործոնների ու ակնկալիքների վերաբերյալ:

Վերջին քառորդ դարում թուրք-հայկական հարաբերությունները շարունակում են չկարգավորված մնալ, չնայած առանձին փորձերին՝ դրանք բարելավելու, երկկողմ դիվանագիտական կապեր հաստատելու և առկա հիմնախնդիրները կարգավորելու ուղղությամբ: Այս հարաբերությունների չկարգավորված մնալը զգալիորեն ազդում է Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության վրա: Թուրք-հայկական հարաբերություններում առկա հիմնախնդիրներին, հաշտեցման փորձերին, ԼՂ հակամարտությունում Թուրքիայի դերակատարությանը, Հայոց ցեղասպանության ժխտողականության դրսևորումներին, ֆուտբոլային դիվանագիտության գործընթացին անդրադարձել են մի շարք հեղինակներ<sup>37</sup>:

<sup>34</sup> Jödicke A., Religion and Soft Power in the South Caucasus, Taylor & Francis Group, 2017.

<sup>35</sup> Petersen A., Integration in Energy and Transport: Azerbaijan, Georgia, and Turkey, Lexington Books, 2016.

<sup>36</sup> Brannen S., The Turkey, Russia, Iran Nexus: Evolving Power Dynamics in the Middle East, the Caucasus, and Central Asia, Center for Strategic & International Studies, 2013.

<sup>37</sup> Սաֆրաստյան Ռ., Հարավի չէ: 21-րդ դարում պատերազմի ստեղծելի հարևանների միջև..., Երևան, 2003; Սաֆրաստյան Ռ., Օսմանյան Կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009; Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները, Գիտական

Հ. Քոթանջյանը, անդրադառնալով տարածաշրջանային խնդիրներին հայ-թուրքական հարաբերությունները որակում է որպես ամենահրատապ լուծում պահանջող հարցերից մեկը, որն անմիջականորեն ազդում է տարածաշրջանային կայունության և անվտանգության ապահովման, ինչպես նաև տարածաշրջանում համագործակցության զարգացման վրա<sup>38</sup>:

Ն. Հովհաննիսյանը, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին, նշում է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար առաջ քաշեց մի քանի նախապայմաններ, որոնք վերաբերում էին նախ և առաջ 1915թ. Հայոց ցեղասպանությանը, Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերի պայքարի դադարեցմանը և Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչմանը: Ըստ հեղինակի՝ միջազգային պրակտիկային անհարիր այս նախապայմանները արդարացիորեն մերժվեցին Հայաստանի ղեկավարության կողմից<sup>39</sup>:

գեկուցումների ժողովածու (18-19 ապրիլի 2008 թ. Կիպրոս-Նիկոսիա), Երևան, 2009; Թորոսյան Ս., Հարավային Կովկասը օգոստոսյան պատերազմից հետո. Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ: Եր., 2009 թ., Torosyan T., The Return of Turkey. Ankara in the South Caucasus after the Russian-Georgian War.- Russia in Global Affairs, Vol. 7, No. 3, July - September 2009; Հ. Քոթանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Երևան, 2008թ.; Հովհաննիսյան Ն., Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 16, Երևան, 1996; Dadrian V., Akcam T.- Judgment At Istanbul: The Armenian Genocide Trials, Berghahn Books, 2011; Dadrian V.-The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Berghahn Books, 2003.; Սաֆարյան Ա., Զիյա Գյուրալի և «Թուրքականության հիմունքները», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012; Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Երևան, 2015; Iskandaryan A., Minasyan S., Pragmatic Policies vs. Historical Constraints: Analyzing Armenia Turkey Relations. Caucasus Institute Research Papers, #1, January 2010. - Yerevan: Caucasus Institute; Akdeniz B., Karabagh Conflict and Its Effects on Turkey's Role in the Caucasus, Naval Postgraduate School, Monterey, California, 2001; Görgülü A., Turkey-Armenia Relations: A Vicious Circle, TESEV Publications, Foreign Policy Analysis, Series 8, 2008; Özbay, F., Türkiye-Ermenistan İlişkileri, BILGESAM Report No 25, 2011; Gökse N., Turkey and Armenia Post-Protocols: Back to Square One?,- TESEV Foreign Policy Bulletin, October 2012; Schrodt N., Modern Turkey and the Armenian Genocide: An Argument about the Meaning of the Past, Cham, Switzerland: Springer, 2014; Jafalian A., Reassessing Security in the South Caucasus Regional Conflicts and Transformation, Routledge, 2011.

<sup>38</sup> Քոթանջյան Հ., նույն տեղում, էջ 107:

<sup>39</sup> Հովհաննիսյան Ն., Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 16, Երևան, 1996:

Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջներից հրաժարումը Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման համար Թուրքիայի առաջ քաշած առանցքային նախապայմաններից մեկն է: Ռ. Սաֆրաստյանը վերլուծում է Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականությունը՝ այն դիտարկելով մեկ շրջայի մաս՝ համիդյան ժամանակներից մինչև քենալականներ: Բացի այդ, նա անդրադառնում է Թուրքիայի կողմից ցեղասպանությունը ժխտող նոր կառույցների ստեղծման հանգամանքին՝ մատնանշելով ժխտման գործընթացում պետական ամենաբարձր մակարդակով մասնակցության գործոնը<sup>40</sup>:

Ա. Գյորգուլուն, վերլուծելով հայ-թուրքական հարաբերությունները, դրանում առկա հիմնական խոչընդոտները, կանխակալ մոտեցում է ցուցաբերում այդ հարաբերություններում Թուրքիայի որդեգրած քաղաքականության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, քննարկում է թուրք-հայկական օրակարգի կնճռոտ խնդիրները, ինչպես օրինակ՝ հայ-թուրքական հաշտեցման փորձերը և Հայոց ցեղասպանության հարցը<sup>41</sup>:

Դ. Ֆիլիպսը, համակողմանի ներկայացնելով հայ-թուրքական հաշտեցման գործընթացի հիմնական առանձնահատկություններն ու նրբերանգները, անդրադառնալով Թուրքիայի կողմից ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի նկատմամբ խիստ ցավազին վերաբերմունքին, նշում է, որ թուրքերը հրաժարվում են ճանաչել ցեղասպանությունը, որովհետև ճանաչումը հակասում է իրենց ազնիվ կերպարի մասին սեփական ընկալմանը: Ըստ հեղինակի, միաժամանակ, Թուրքիայի կառավարությունը վախենում է, որ արշավը փոխհատուցման կամ տարածքային պահանջների իրավական հիմք է ստեղծում<sup>42</sup>:

Տ. Թորոսյանը, վերլուծելով Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության ուղենիշերը օգոստոսյան պատերազմից հետո և այդ համատեքստում հայ-թուրքական հարաբերությունները, նշում է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը Թուրքիայի համար արդյունավետ միջոց է եղել իր նպատակներին հասնելու

<sup>40</sup> Սաֆրաստյան Ռ., Օսմանյան Կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009; Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները, Գիտական զեկուցումների ժողովածու (18-19 ապրիլի 2008թ. Կիպրոս-Նիկոսիա), Երևան, 2009:

<sup>41</sup> Görgülü A., Turkey-Armenia Relations: A Vicious Circle, TESEV Publications, Foreign Policy Analysis, Series 8, 2008.

<sup>42</sup> Ֆիլիպս Դ., Բարձրացնելով անցյալը. ժողովրդական դիվանագիտությունը և հայ-թուրքական հաշտեցումը, Երևան, 2010:

համար, որոնց Թուրքիան հասել է առանց որևէ քայլ ընկրկելու՝ սուկ հերթապահ հայտարարություններ անելով հարաբերությունների նորմալացման մասին և դրանք զուգակցելով բարձրաստիճան պաշտոնյաների փոխլրացնող դիրքորոշումներին՝ հարաբերությունների կարգավորման նախապայմանների վերաբերյալ<sup>43</sup>:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ հավելյալ ուսումնասիրության անհրաժեշտություն է զգացվում Հայաստանի նկատմամբ Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության նրբերանգների, ինչպես նաև երկկողմ հարաբերությունների կարգավորման երկուստեք կարևորությունների ու սպասելիքների, թուրք-հայկական չկարգավորված հարաբերությունների առանձնահատկությունների, հիմնական դրդապատճառների ու գործոնների վերաբերյալ: Սակայն, նյութի լիարժեքությունն ապահովելու նպատակով առենախտության մեջ լայնորեն օգտագործվել են հայկական, թուրքական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և ռուսական մամուլը, ինչպես նաև բազմաափսի էլեկտրոնային ռեսուրսներ, հայալեզու (Հայաստանի Ազգային արխիվ<sup>44</sup>, ՀՀ արտգործնախարարության պատմադիվանագիտական բաժնի, ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության Թուրքիայի բաժնի նյութերն ու տեղեկագրեր<sup>45</sup>) և օտարալեզու փաստաթղթեր<sup>46</sup>:

<sup>43</sup> Թորոսյան Տ., Հարավային Կովկասը օգոստոսյան պատերազմից հետո. Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ: Եր., 2009թ.:

<sup>44</sup> Հայաստանի Ազգային արխիվ, ֆոնդ 326, ցուցակ 9, գործ 192, գործ 70:

<sup>45</sup> ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնի, ցուցակ 3, գործ 159, ցուցակ 5, գործ 243, ցուցակ 6, գործ 63, գործ 64, ցուցակ 11, գործ 186, ցուցակ 11, գործ 187, ցուցակ 14, գործ 151, ցուցակ 16, գործ 163; ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժնի, Հաշվետվություն, 2000թ. սեպտեմբերի 8-12-ը Ստամբուլ կատարված գործուղման վերաբերյալ; ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժնի, Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն, էջ 5, 7, 8:

<sup>46</sup> Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, 10.10.2009, [http://www.mfa.am/ru/files/20091013\\_protocol.pdf](http://www.mfa.am/ru/files/20091013_protocol.pdf); Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին, 10.10.2009, [http://www.mfa.am/ru/files/20091013\\_protocol.pdf](http://www.mfa.am/ru/files/20091013_protocol.pdf); Протокол №5 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменений в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995 г., 20.08.2010, [http://www.mid.ru /BDOMP/spd\\_md.nsf /0/2C1\\_73CA176462C4044\\_257C200022C35F](http://www.mid.ru /BDOMP/spd_md.nsf /0/2C1_73CA176462C4044_257C200022C35F); Обращение Президента России к народам Северного Кавказа и всему населению юга России, Красная Звезда, 28.08.1992; United States. Congress. House. Committee on International Relations. Affirmation of the United States Record On the Armenian Genocide Resolution: Report Together With Dissenting Views (to Accompany H. Res. 596). [Washington, D.C.: U.S. G.P.O., 04.10. 2000, <http://babel.hathitrust.org/cgi/pt?id=pur1.32754070183128>; The

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Առենախոսության հետազոտության օբյեկտն է Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը, իսկ առարկան՝ Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները և դրսևորումները:

**Հետազոտության նպատակն ու խնդիրներն:** Առենախոսության նպատակը Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հիմնական ասպեկտների ամբողջական ուսումնասիրությունն է, այդ քաղաքականության ձեռքբերումների ու բացթողումների պատճառների բացահայտումը, հարավկովկասյան երկրների հետ երկկողմ և եռակողմ հարաբերությունների վրա ազդող գործոնների քննությունը, ինչպես նաև տարածաշրջանային խնդիրների լուծման ու աշխարհաքաղաքական մրցակցության վրա Անկարայի ազդեցության հետևանքների ու հեռանկարների բացահայտումը:

Այդ նպատակներին հասնելու համար աշխատանքում առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել Հարավային Կովկասում տարածաշրջանային տերություն դառնալու Թուրքիայի նկրտումները, գնահատել դրանց արդյունավետությունն ու հեռանկարները,
- բացահայտել Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական մրցակցության վրա Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ազդեցության հնարավորությունները, դրսևորումները և հեռանկարները,
- վերլուծել «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության տարիներին Հարավային Կովկասում Թուրքիայի կիրառած տարածաշրջանային քաղաքականությունը՝ ի հայտ բերելու համար ձեռքբերումներն ու ձախողումները, այդ քաղաքականության զարգացման հեռանկարները,
- դիտարկել Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսական ուղղությունների համեմատության արդյունքները՝ դրանց ազդեցությունը արտաքին հարաբերությունների ձևավորման և գործունեության վրա,
- բացահայտել Հարավային Կովկասի երկրների նկատմամբ Թուր-

Georgian Foreign Policy Strategy 2006-2009, [http://www.mfa.gov.ge/files/35\\_9440\\_673620\\_11.pdf](http://www.mfa.gov.ge/files/35_9440_673620_11.pdf); Strasbourg/ Kehl Summit Declaration, Issued by the Heads of State and Government participating in the meeting of the North Atlantic Council in Strasbourg, 04.04.2009, [http://www.nato.int/cps/en/natolive/news\\_52837.htm?mode=pressrelease](http://www.nato.int/cps/en/natolive/news_52837.htm?mode=pressrelease); H.Res. 252 (111th): Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution, 22.09.2010, <https://www.govtrack.us/congress/bills/111/hres252/text>.

քիայի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները, մարտահրավերներն ու հեռանկարները,

- առանձնացնել թուրք-ուսական հարաբերությունների զարգացման փուլերը, հարավկովկասյան և հարևան տարածաշրջաններում թուրք-ուսական մրցակցության ու համագործակցության առանձնահատկությունները, առկա մարտահրավերներն ու հեռանկարները,

- վերլուծել Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմավարական և աշխարհատնտեսական նախագծերում Ադրբեջանի ունեցած դերակատարությունն ու տարածաշրջանային զարգացումների վրա թուրք-ադրբեջանական համագործակցության ազդեցությունը,

- բացահայտել Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռանկյունու հետապնդած շահերը և դրանց անդրադարձը տարածաշրջանային քաղաքականության վրա,

- բացահայտել Վրաստանի հետ Անկարայի հարաբերությունների զարգացման նշանակությունը Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման տեսակետից,

- գնահատել Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերի արդյունավետությունն ու հեռանկարները, դրանց նշանակությունը տարածաշրջանում իրադարձությունների զարգացման վրա ազդեցության տեսակետից, ինչպես նաև որպես տարածաշրջանում աշխարհաքաղաքական մրցակցության վրա ազդեցության մեխանիզմ:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Առենախոսության մեթոդաբանական հիմքն են գիտական հետազոտության ընդհանուր և քաղաքական գիտություններին հատուկ մեթոդները, սկզբունքներն ու եղանակները, վերլուծական-համադրական, համեմատական, ինչպես նաև համակարգային ուսումնասիրությունների մեթոդները: Նման մեթոդական մոտեցումը հնարավորություն է տալիս ամբողջականորեն վերլուծելու Թուրքիայի հարավկովկասյան տարածաշրջանային քաղաքականության պատճառահետևանքային կապերը, հետևանքներն ու հեռանկարները, ինչպես նաև այդ քաղաքականության զարգացման դինամիկան:

**Աշխատանքի գիտական նորոպը:** Իրականացված հետազոտության որոշ արդյունքներ ներկայացվում են պաշտպանության որպես աշխատանքի գիտական նորոպ, բացահայտելով.

- Հարավային Կովկասում տարածաշրջանային տերություն դառնալու

Թուրքիայի նկրտումները, դրանց իրականացմանն ուղղված գործունեությունն ու արդյունքները, դրանց պատճառներն ու հետևանքները:

- «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության օրոք Հարավային Կովկասում Թուրքիայի վարած տարածաշրջանային քաղաքականության հիմնական գերակայությունները, ձեռքբերումներն ու ծախողումները, արդյունքում ձևավորված իրավիճակն ու զարգացման հեռանկարները:

- Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսական ուղղությունների ու գործնական իրականացման համեմատության արդյունքները, դրանց ազդեցությունը արտաքին հարաբերությունների ձևավորման, ինչպես նաև կասպյան ավազանից դեպի Եվրոպա էներգակիրների տեղափոխման նախագծերի իրականացման վրա:

- Թուրք-ռուսական հարաբերությունների զարգացման փուլերը, հարավկովկասյան և հարևան տարածաշրջաններում համագործակցության և մրցակցության առանձնահատկությունները, մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները, դեպի Եվրոպա էներգակիրների փոխադրմանն ուղղված ձևավորման վրա այդ հարաբերությունների ազդեցությունը:

- Հարավային Կովկասում Թուրքիայի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նախագծերում Ադրբեյջանի ունեցած դերակատարությունը, ինչպես նաև երկկողմ համագործակցության առանձնահատկությունները և ազդեցությունը տարածաշրջանում ծավալվող զարգացումների վրա:

- Թուրքիայի հարավկովկասյան տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում թուրք-վրաց-ադրբեյջանական առանցքի նպատակներն ու շահերը:

- Արդի փուլում թուրք-վրացական հարաբերությունների առանձնահատկությունները, զարգացման փուլերը, դրան նպաստող գործոններն ու ակնկալիքները, ինչպես նաև Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման գործում Վրաստանին վերապահված դերը:

- Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության առանձնահատկությունները, երկու երկրների միջև հարաբերությունների չկարգավորված լինելու հիմնական դրդապատճառներն ու դրանց վրա ազդող գործոնները:

**Աշխատանքի կիրառական նշանակությունը:** Ատենախոսությունը արժեքավոր է ինչպես ակադեմիական շրջանակների համար, որոնց հետազոտությունների առարկաներն են Թուրքիան և սահմանակից տարածաշրջանները (Հարավային Կովկաս, Մերձավոր Արևելք, Բալկաններ, Կասպից ու Սև ծովերի ավազաններ և այլն), այնպես էլ այդ տարածաշրջաններում շահեր հետապնդող պետությունների ու կազմակերպությունների համար քաղաքականության մշակման և իրագործման տեսակետից:

Ատենախոսության արդյունքները հնարավորություն կտան Թուրքիայի արդի արտաքին քաղաքականությանն առնչվող քաղաքականություն մշակող և իրականացնող շրջանակներին մեծացնել դրանց արդյունավետությունը՝ Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունն առավել համակարգված, ամբողջական և հավաստի ընկալելու ու ներկայացնելու շնորհիվ:

**Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են 15 ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում ներկայացվում են թեմայի ուսումնասիրության արդիականությունը, հետազոտության գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, գիտական նորոյթը, ատենախոսության տեսական նշանակությունն ու գործնական կիրառելիության հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ «**Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները արդի փուլում**» գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ ներկայացվում են ԽՍՀՄ փլուզման արդյունքում առաջացած նոր աշխարհաքաղաքական իրավիճակի հետևանքով Թուրքիայի արտաքին քաղաքականությունում տեղի ունեցած էական փոփոխությունների նախադրյալները, նպատակները և տեսական հիմքերը: Աշխարհաքաղաքական մրցակցության համատեքստում դիտարկվում են արտաքին քաղաքականության հոչակված նպատակների և դրանց իրականացման արդյունքների համապատասխանության վիճակն ու հեռանկարները:

Առաջին՝ «**Թուրքիայի արտաքին քաղաքականության փոփոխության անհրաժեշտությունը ԽՍՀՄ փլուզումից հետո**» ենթագլխում անդրադարձ է կատարվում ԽՍՀՄ փլուզման հետո Հարավային Կովկասին:

սում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի ակտիվացման հիմնական նախադրյալները, դրան նպաստող գործոնները, ինչպես նաև այդ քաղաքականության ձեռքբերումներն ու ձախողմաները: Լուսաբանվում են նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական գերակայությունների և ուղղությունների վերաբերյալ տարբեր քաղաքական ուժերի դիրքորոշումները, որոնց արտաքին քաղաքականության տեսլականի հիմքում առկա էին ընդհանուր տեսակետներ այն է՝ օսմանյան կայսերական տարածքային ընդգրկումով և կրոնական ուղղվածությամբ արտաքին հարաբերությունների կառուցումն ու գործունեության տարածքի ձևավորումը:

Երկրորդ՝ «**Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության սկզբնավորումը**» ենթագլխում ներկայացվում են Թուրքիայի կողմից տարածաշրջանային տերության կարգավիճակի հավակնելու հարթությունները, Հարավային Կովկասում տարածաշրջանային առաջնորդ դառնալու փորձերը և դրան հասնելուն նպատակաուղղված ծրագրերը: Տեսականորեն, Թուրքիան XXI դ. տարածաշրջանային տերության կարգավիճակի կարող էր հավակնել երեք հարթություններում՝ աշխարհագրական (Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում և այլն), կրոնական (իսլամական աշխարհում) և ռեսուրսային (նավթի, գազի և այլնի արտահանման ուղիները վերահսկողի կարգավիճակի առումով): Գործընթացները պարզորոշ ցույց տվեցին, որ տարածաշրջանների աշխարհագրական ընդգրկման առումով Թուրքիան լիարժեք տարածաշրջանային տերություն դառնալ չի կարող: Հարավային Կովկասում նրա դերակատարությանը խանգարում են ՀՀ-ն, ԼՂՀ-ն, որի խնդրի լուծման ձևաչափում այն ընդգրկված չէ, ՌԴ-ի ազդեցության ոլորտում գտնվող երկու ինքնորոշված պետությունները՝ Աբխազիան և Հարավային Օսիան, ինչպես նաև տարածաշրջանի գլխավոր դերակատար ՌԴ-ն:

Երրորդ՝ «**Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության տեսական հիմքը**. «**Նոր օսմանականություն**», թե՛ «**ռազմավարական խորություն**» ենթագլխում ռազմաքաղաքականության առարկա են դառնում «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ որդեգրված նոր մոտեցումները՝ ի դեմս «Նոր օսմանականություն» գաղափարախոսության և «Ռազմավարական խորություն» տեսության: Վերջինս հռչակվեց Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմք: Համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվում է հռչակված տեսության և արտաքին քաղաքակա-

նության մեջ նրա կիրառելիության անհամատեղելիությունը: Մասնավորապես, Թուրքիայի արտաքին քաղաքական կարևորագույն սկզբունքներից մեկը հռչակված «զրո խնդիրներ հարևանների հետ» քաղաքականությունը Հարավային Կովկասում և հարևան տարածաշրջաններում ի վերջո տապալվեց՝ հարուցելով նոր մարտահրավերներ ու խնդիրներ՝ հարևանների հետ հարաբերություններում:

Աշխատանքի երկրորդ՝ «**Թուրք-ռուսական մրցակցային/համագործակցային հարաբերությունները Հարավային Կովկասում և ՄԱԿ-ի փուլումից հետո**» գլուխում ռազմաքաղաքական են վերջին քառորդ դարում թուրք-ռուսական հարաբերությունների զարգացման փուլերը և դրանց առանձնահատկությունները, պարզաբանվում են երկկողմ համագործակցության առանցքային ուղղությունները, դրանց նպաստող գործոնները, ինչպես նաև թուրք-ռուսական հարաբերություններում առկա հիմնական հակասությունները և դրանց մրցակցային հարթությունները:

Առաջին ենթագլխում՝ «**Հարավային Կովկասում թուրք-ռուսական հարաբերությունների առաջին փուլը**», մանրամասն քննության են առնվում հետխորհրդային առաջին տասնամյակում թուրք-ռուսական հարաբերությունների առանձնահատկությունները: Մասնավորապես, ներկայացվում են երկու երկրների միջև ընթացող սուր մրցապայքարի հիմնական դրդապատճառները, հակադրության առանցքային ոլորտներն ու տարածաշրջանները, որոնք պայմանավորված էին նախ և առաջ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի ակտիվ քաղաքականություն վարելու նպատակադրությամբ: Վերլուծվում են նաև Թուրքիայի և Ռուսաստանի միջև ձևավորված առևտրատնտեսական և ռազմաքաղաքական համագործակցության նախադրյալները և զարգացման հնարավորությունները:

Երկրորդ՝ «**Թուրք-ռուսական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համալրեքստում մինչև «հնգօրյա պայերազմ»-ը**» ենթագլխում ներկայացվում են Թուրքիայում ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո թուրք-ռուսական հարաբերությունների ինտենսիվորեն զարգացման հիմնական դրդապատճառները և դրան նպաստող աշխարհաքաղաքական գործոնները: Անդրադարձ է կատարվում նոր աշխարհակարգի ձևավորման անգիջում պայքարի և էներգակիրների տեղափոխման երթուղիների ու հոսքերի վերանայման ազդեցությանը Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների վրա, որոնք ավան-

դարար աչքի են ընկել մրցակցային և համագործակցային բաղադրիչների յուրահատուկ համադրությամբ ու հերթագայությամբ:

Երրորդ՝ **«Թուրք-ռուսական հարաբերությունները աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում»** ենթագլխում ուսումնասիրվում է թուրք-ռուսական հարաբերությունները՝ Հարավային Կովկասում 2008թ. 5-օրյա պատերազմից հետո ձևավորված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում, որը մեծապես նպաստեց երկու երկրների փոխհարաբերությունների զարգացմանը տնտեսական, քաղաքական և միջազգային հիմնախնդիրների շուրջ համագործակցության բնագավառներում: Դիտարկվում են նաև տարբեր ոլորտներում երկու երկրների միջև առկա բազմաթիվ տարածայնություններն ու հակասությունները, որոնք պայմանավորված էին Հարավային Կովկասում և հարևան տարածաշրջաններում Թուրքիայի՝ լիդերության հասնելու ձգտումներով և դրան Ռուսաստանի սուր հակազդեցությամբ:

Ատենախոսության երրորդ՝ **«Ադրբեջանը որպես Հարավային Կովկասում Թուրքիայի առանցքային գործընկեր»** գլուխում հանգամանորեն ուսումնասիրվում են Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում թուրք-ադրբեջանական հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, դերն ու նշանակությունը: Առանձին ուղղություններով ներկայացվում են երկու երկրների ռազմաքաղաքական և առևտրատնտեսական համագործակցության հիմնական ասպեկտները և դրանց ազդեցությունը ներտարածաշրջանային զարգացումների վրա, ինչպես նաև վեր են հանվում երկկողմ հարաբերություններում առկա խնդիրները և դրանց ներգործությունը Թուրքիայի քաղաքական ուղենիշների վրա:

Առաջին ենթագլխում՝ **«Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական հարաբերությունների առաջին փուլը»**, բացահայտվում են 1990-ականներից սկսած թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման միտումները և ԼՂ հակամարտությունում Ադրբեջանին ցուցաբերած Թուրքիայի բացահայտ և զգալի աջակցությունը: Ներկայացվում են նաև թուրք-ադրբեջանական հակահայկական քաղաքականության հիմնական օրակարգը՝ երկկողմ հարաբերությունները կառուցելով «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսին համահունչ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Թուրք-ադրբեջանական հարաբերությունները «նոր օսմանիզմ»-ի քաղաքականության շրջանում»**, մեծ ուշադրություն է դարձվում հարավկովկասյան էներգետիկ և տրանսպորտային նա-

խագծերի իրականացման և դրանց հիմնական երթուղիների վերահսկման ուղղությամբ ընթացող մրցապայքարին և Թուրքիայի հետապնդած շահերին: Առանձնահատուկ անդրադարձ է կատարված Թուրքիայի համար չափազանց կարևոր երկու՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում նախագծերին, որոնք տարածաշրջանային առաջատարի վերածվելու Թուրքիայի նոր օսմանականության քաղաքականության համար հենքային նշանակություն ունեին: Դիտարկվում է նաև թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցության խորացումը և այդ առանցքին Վրաստանին ներառելու թուրք-ադրբեջանական քայլերը:

Երրորդ գլխի վերջին՝ **«Թուրք-ադրբեջանական հարաբերությունները Հարավային Կովկասում սրեղծված նոր իրավիճակի պայմաններում»** ենթագլխում հանգամանալից քննարկման են արժանացել 2008թ. ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորման արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիայի և Ադրբեջանի միջև առաջացած լուրջ հակասությունները և դրանց անդրադարձը Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության վրա: Մասնավորապես, Ադրբեջանի պատճառով ձախողվեց տարածաշրջանի պետություններն իրեն կենսական կապերով կապելու Թուրքիայի քաղաքականությունը, որի հետևանքով տարածաշրջանային տերությանը հատուկ արտաքին քաղաքականություն վարելու փոխարեն Թուրքիան «ստիպված» հանդես եկավ ադրբեջանական շահերի պաշտպանությամբ, որի դրսևորումը դարձավ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի սառեցումը:

Միևնույն ժամանակ ներկայացվում են թուրք-ադրբեջանական առևտրատնտեսական և ռազմատեխնիկական համագործակցության նոր ձեռքբերումները և դրանց անդրադարձը տարածաշրջանային զարգացումների վրա:

Աշխատանքի չորրորդ՝ **«Վրաստանը որպես Թուրքիայի համար Հարավային Կովկասի դարպաս»** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ քննվում են թուրք-վրացական հարաբերությունների զարգացման ընթացքը, երկկողմ համագործակցության առանցքային ոլորտները, ինչպես նաև վրաց-արխազական հակամարտությունում Թուրքիայի դիրքորոշման հարցը: Միևնույն ժամանակ ներկայացվում են Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռանկյունու հետապնդած շահերը և դրանց անդրադարձը տարածաշրջանային քաղաքականության վրա:

Մասնավորապես, առաջին՝ **«Թուրք-վրացական հարաբերությունների սկզբնական շրջանը»** ենթազբյուրում անրադարձ են կատարվում Վրաստանի անկախացումից հետո թուրք-վրացական հարաբերությունների ձևավորման գործընթացին, վրաց-արխազական հակամարտությունում Թուրքիայի որդեգրած քաղաքականության հիմնական առանձնահատկություններին: Բացահայտվում են թուրք-վրացական ռազմաքաղաքական համագործակցության նրբերանգները և այդ գործակցության խորացման նախադրյալները: Հանդես գալով որպես Վրաստանի տարածքային ամբողջականության ճանաչող և սատարող պետություն՝ Թուրքիան այդուհետև աստիճանաբար վերածվում է Վրաստանի ռազմավարական գործընկերոջ:

Երկրորդ՝ **«Թուրք-վրացական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համարեքստում մինչև «հնգօրյա պայտերազմ»-ը»** ենթազբյուրում լուսարանվում են Թուրքիայի ջանքերը՝ Վրաստանն ընդգրկելու իր տարածաշրջանային ծրագրերում և, հատկապես, Թուրքիա-Ադրբեջան էներգետիկ ռեսուրսների արտահանման և տրանսպորտային երթուղիների վերահսկման նախագծերում: Վերլուծության են ենթարկվել Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման գործում Վրաստանին հատկացված դերակատարությունը և այդ համատեքստում երկու երկրների միջև ռազմական ոլորտում համագործակցության սերտացմանը նպաստող գործոնները, ինչպես նաև երկու երկրների հարաբերությունների ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա:

Երրորդ՝ **«Թուրք-վրացական հարաբերությունները աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում»** ենթազբյուրում ներկայացվում են 2008թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում Հարավային Կովկասում ձևավորված նոր իրավիճակի ազդեցությունը տարածաշրջանում առկա երկկողմ և բազմակողմ հարաբերությունների և, մասնավորապես, թուրք-վրացական հարաբերությունների վրա: Բացահայտվում են երկու երկրների հարաբերություններում առաջացած մարտահրավերներ և Թուրքիայի՝ դրանց հաղթահարմանը ուղղված քայլերն ու դրանց արդյունավետությունը: Թուրք-վրացական տնտեսական և քաղաքական համագործակցությունը վերջին տարիներին վերելք է ապրում, և Վրաստանը Թուրքիային տարածաշրջանում դիտարկում է որպես ռազմա-

վարական գործընկեր, իսկ Թուրքիան Վրաստանին համարում է կամուրջ դեպի Հարավային Կովկաս և Միջին Ասիա:

Ատենախոսության հինգերորդ՝ **«Թուրք-հայկական հարաբերությունները ԽՍՀՄ փլուզումից հետո»** գլուխը բաղկացած է երեք ենթազբյուրներից, որտեղ քննվում են վերջին քառորդ դարում հայ-թուրքական հարաբերությունների հիմնական առանձնահատկությունները, դարաբաղյան հակամարտության ռոջ ընթացքում Թուրքիայի հակահայկական քաղաքականության դրսևորումները, ինչպես նաև վերլուծվում են երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման փորձերը և դրանց ծախսուման հիմնական դրդապատճառները: Ներկայացվում են նաև Հայոց ցեղասպանությունը ժխտելուն ու միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելուն ուղղված թուրքական իշխանությունների քայլերը:

Մասնավորապես, առաջին՝ **«Հայ-թուրքական հարաբերությունների ձևավորման գործընթացից շրջափակում»** ենթազբյուրում անրադարձ են կատարվում Հայաստանի անկախացումից հետո Թուրքիայի հետ հարաբերությունների ձևավորման քայլերին, որոնց կարգավորման հիմնական խոչընդոտը Թուրքիայի առաջ քաշած կոշտ նախապայմաններն էին: Մինևույն ժամանակ բացահայտվում են ԼՂ հակամարտության ընթացքում Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերած քաղաքական, ռազմաֆինանսական և դիվանագիտական մեծ աջակցությունը, ինչպես նաև Անկարայի ջանքերը՝ հանդես գալու որպես միջնորդ հակամարտության կարգավորման գործում և այդ համատեքստում ջանալով պահպանել երկկողմ շփումներն ու երկխոսության հնարավորությունները: Վերլուծվում են նաև Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություն հռչակվելու անդրադարձը հայ-թուրքական հարաբերությունների վրա և դրա դեմ ուղղված թուրքական իշխանությունների հակաքայլերը:

Երկրորդ՝ **«Թուրք-հայկական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համարեքստում մինչև «Հնգօրյա պայտերազմ»-ը»** ենթազբյուրում քննվում են ԱԶԿ-ի իշխանության գալու առաջին տարիներին թուրք-հայկական հարաբերությունների կարգավորման փորձերն և այդ համատեքստում Թուրքիայի և Հայաստանի ղեկավարների միջև ընթացող նամակագրությունը, ինչպես նաև Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի երկամյա գործունեության արդյունքները: Բացահայտվում են նաև Թուրքիայի իշխանությունների Հայոց ցեղասպանության փաստը ժխտող քաղաքականության առաջնուման նոր,

թարմ մոտեցումները: Դրա հետ մեկտեղ, առաջին անգամ Թուրքիայում նշանակալից երևույթ դարձավ սեփական պատմության հետ ավելի անկեղծ առերեսվելու, Հայոց ցեղասպանության փաստը հրապարակային հարթակներում քննարկելու իրողությունը, որոնց համար յուրատեսակ կատալիզատոր դարձան Հրանտ Դինքի սպանությունը և դրան հաջորդած հասարակական բոտն քննարկումները:

Երրորդ՝ **«Թուրք-հայկական հարաբերությունները Հարավային Կովկասում սրեղծված աշխարհաքաղաքական նոր պայմաններում»** ենթագլխում լուսաբանվում են 2008 թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի Հայաստան այցով սկիզբ առած «ֆուտուրային դիվանագիտությունը», ինչպես նաև երկկողմ հարաբերությունների կարգավորման գործընթացի արձագանքները Թուրքիայի և Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում և Հայկական սփյուռքում: Ներկայացվում են նաև թուրքական քարոզչամեքենայի մշակած և հետևողական պայքարը Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման, ինչպես նաև տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանության իրողության ժխտումը քրեականացնող օրենքների դեմ:

Եզրակացությունում **ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, տեսական ու գործնական նշանակություն ունեցող եզրահանգումներն ու առաջարկությունները.**

«Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության շրջանում Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հիմնական գերակայությունների և ձեռքբերումների, առկա մարտահրավերների ու հեռանկարների վերլուծությունը վկայում է, որ.

➤ ԽՍՀՄ փլուզումից և նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի մեկնարկից հետո Թուրքիայի ազդեցիկ քաղաքական ուժերի արտաքին քաղաքական մոտեցումների հոչակված հիմքը «Նոր օսմանականություն» գաղափարախոսության տարատեսակներն են: «Ռազմավարական խորություն» տեսությունը և «Նոր օսմանականություն» գաղափարախոսությունն ունեն էական ընդհանրություններ և առաջինը, որոշ վերապահումներով, կարելի է համարել երկրորդի տարատեսակ, որը ԱԶԿ իշխանության օրոք հոչակվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմք:

➤ Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսական ու գաղափարական ուղղությունների և կիրառած քաղաքականության համեմատության արդյունքում ակնհայտ է դառնում դրանցում առկա հակասություն-

ները: Մասնավորապես, հարևան երկրների, այդ թվում՝ հարավկովկասյան տարածաշրջանի հետ հարաբերություններում Թուրքիան ոչ միայն չի կարողացել իրացնել «զրո խնդիրներ հարևանների հետ» հոչակված քաղաքականությունն, այլև չի կրճատել այն հարևանների թիվը, որոնց հետ լուրջ խնդիրներ ունի:

➤ Տեսականորեն Թուրքիան XXI դ. տարածաշրջանային տերության կարգավիճակի կարող էր հավակնել երեք հարթություններում՝ աշխարհագրական (Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում և այլն), կրոնական (իսլամական աշխարհում) և ռեսուրսային (նավթի, գազի և այլնի արտահանման ուղիները վերահսկողի կարգավիճակի առումով): Գործընթացները պարզորոշ ցույց տվեցին, որ աշխարհագրական ընդգրկման առումով Թուրքիան լիարժեք տարածաշրջանային տերություն դառնալ չի կարող: Հարավային Կովկասում Անկարան չի կարող ազդեցիկ դերակատարություն ունենալ ՀՀ-ում, Արցախում, որի խնդրի լուծման ձևաչափում այն ընդգրկված չէ, ՌԴ-ի ազդեցության ոլորտում գտնվող երկու ինքնորոշված պետություններում՝ Աբխազիայում և Հարավային Օսիայում, ինչպես նաև չի կարող մրցակցել տարածաշրջանում մեծ դերակատարություն ունեցող ՌԴ-ի հետ:

➤ Թուրքիան, դեռևս պահպանում է հաջողության հասնելու հնարավորություն երրորդ՝ ռեսուրսային (հատկապես էներգետիկ) հարթությունում: Եվ հատկապես այս ասպարեզում է, որ Թուրքիան կարողացավ որոշ հաջողություններ արձանագրել: Այդուհանդերձ, ԵՄ-ի հետ հակոտնյա շահերը լուրջ խոչընդոտ են դրա համար:

➤ Աշխատանքում ռուս-թուրքական հարաբերությունները դիտարկվում են բարդ՝ համագործակցություն/մրցակցություն ձևաչափով: Այդ ձևաչափը կողմերից պահանջում է մեծ ճկունություն բարդ իրավիճակներում, որը հաճախ Միացյալ Նահանգների ազդեցությամբ էապես նվազեցնում է նման քաղաքականության արդյունավետությունը: Ներկայումս ստեղծված իրավիճակը շատ նման է նախորդ դարի նույն շրջանի իրավիճակին, երբ գրեթե որևէ այլ գործընկեր չունենալու պարագայում կարողացան միասին հաղթահարել անհաղթահարելի թվացող իրավիճակը:

➤ Թուրք-ռուսական հարաբերությունները կարելի է պայմանականորեն բաժանել չորս փուլի: Դրանցից առաջինում, որը սկսվեց ԽՍՀՄ փլուզումից հետո և շարունակվեց մինչև 2007թ., Անկարան փորձում էր դառնալ Եվրասիական կենտրոնի երկու տարածաշրջանների՝ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի ամենաազդեցիկ արտաքին ուժը, սա-

կայն ձախողվեց քանի որ ներքաղաքական մարտահրավերները հաղթահարած Ռուսաստանն աստիճանաբար վերականգնում էր ազդեցությունը: Երկրորդ փուլի սկզբի խորհրդանիշ կարելի է համարել 2008թ. ռուս-վրացական հնգօրյա պատերազմը, որին առնչվող իրադարձությունները բացահայտեցին Անկարայի ռուսամետ նախապատվությունները: Մինչ 2015թ. տևած այս փուլում ռուս-թուրքական հարաբերությունները բուռն զարգացում ունեցան՝ միջազգային հարաբերություններում երկու երկրների խորացող դժվարությունների պատճառով և գայթակղիչ հեռանկարների շնորհիվ:

➤ Թուրք-ռուսական հարաբերությունների երրորդ փուլում խորը ճգնաժամի առաջացման պատճառ դարձավ Մերձավոր Արևելքում ռուսական ռազմաօդային ուժերի՝ Անկարայի համար անցանկալի գործողությունների, ինչպես նաև Միացյալ Նահանգների ու Եվրամիության ճնշումների հետևանքները չեզոքացնելու նպատակով 2015թ. ավարտին իր սահմաններին մերձակա սիրիական տարածքում ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումը Թուրքիայի կողմից: Թեև ճգնաժամը կարճ տևեց՝ ընդամենը 7 ամիս, սակայն իր նշանակությամբ այն կարելի է համարել առանձին փուլ:

➤ Չորրորդ փուլը սկսվեց 2016թ. թուրք-ռուսական ճգնաժամի հաղթահարմամբ և համագործակցության վերականգնմամբ, որն առաջին հերթին պայմանավորված էր միջազգային հարաբերություններում Ռուսաստանի և Թուրքիայի զգալի բարդություններով, որոնք արդեն դրսևորում են մեկուսացվածության լուրջ նշաններ: Արևմուտքի հետ Ռուսաստանի հարաբերությունները ոչ միայն չեն բարելավվում, այլև, հատկապես Միացյալ Նահանգների հետ ավելի են լարվում՝ ի հեճուկս այն կանխատեսումների, որ Դ. Թրամփի նախագահությունը կհանգեցնի լարվածության նվազմանը: Նոր աշխարհակարգում տեղ ունենալու համար Մոսկվան դեռ պետք է ապացուցի, որ կարող է հաղթահարել տարբեր տարածաշրջաններում առկա մարտահրավերները՝ սևծովյան տարածաշրջանում՝ Արևելյան Ուկրաինայի և Դրիմի հակամարտություններ, Մերձավոր Արևելքում՝ սիրիական թնջուկ, Հարավային Կովկասում տարածաշրջանային ազդեցության ձևաչափի հստակեցում և այլն:

➤ Թուրքիայի ներուժը չի բավարարում դիմանալու համար այն բազմավեկտոր (որոշ դեպքերում՝ միմյանց հակոտնյա) հարաբերություններից բխող մարտահրավերներին, որոնք ձևավորվել են ԱՂԿ-ի վարած արտաքին քաղաքականության հետևանքով: Դրան ավելացած ներքաղաքական

լուրջ բարդությունները՝ հեղաշրջման փորձ, դրան հաջորդած բռնությունների մեծ ալիք, ապա՝ հակաժողովրդավարական սահմանադրական փոփոխություններ, իրավիճակը դարձրել են չափազանց բարդ: Ներքաղաքական իրավիճակը գրեթե ոչ մի լուրջ այլընտրանք չի թողնում ռուս-թուրքական հարաբերությունների խորացմանը:

➤ Հարավային Կովկասում տարածաշրջանային քաղաքականության և ռուս-թուրքական հարաբերությունների առանցքային խնդիրներից մեկը էներգետիկ ռեսուրսների՝ դեպի Եվրոպա տեղափոխման երթուղիներին և այդ ռեսուրսների ծագման երկրի ընտրությանն է վերաբերում: Այն ունի ընդգծված աշխարհաքաղաքական նշանակություն, որն ակնհայտորեն երևում է այն ջանքերից, որոնք գործադրում են ԵՄ-ն և ԱՄՆ-ն Նաբուկո խողովակաշարի անցկացման հարցն ամեն գնով օրակարգում պահելու համար՝ ի հակակշիռ ռուս-թուրքական «Թուրքական հոսքի»:

➤ Հարավային Կովկասում ռուս-թուրքական հարաբերությունների ազդեցությունը էապես կմեծանա, եթե խորանան փոփոխությունները, որոնք Թուրքիան իրականացնում է ռազմաքաղաքական հայեցակարգում՝ ռազմատեխնիկական ոլորտում ձգտելով ավելի մեծ ինքնուրույնության: Այդ մասին է վկայում այն, որ Թուրքիայի ղեկավարությունը փորձում է տարեց-տարի առավել մեծացնել և ցուցադրել երկրի անկախությունը ՆԱՏՕ-ի ընդհանուր ռազմավարությունից: Թուրքիան նաև փորձում է բազմազանեցնել ռազմատեխնիկական ոլորտում համագործակցության ուղղությունները: Այս համատեքստում Ռուսաստանը Թուրքիայի համար այլընտրանք է՝ ցուցադրելով Արևմուտքին, որ Ռուսաստանը որոշ զարգացումների դեպքում կարող է փոխարինել նրան: Այդուհանդերձ, այս գործընթացի իրական հեռանկարները կուրվագծվեն այն բանից հետո, երբ Արևմուտքն այն դիտարկի որպես իրական սպառնալիք և ամբողջ ուժով արձագանքի:

➤ Թուրք-ադրբեջանական հարաբերություններն անցել են ինչպես աստիճանական սերտացման, այնպես էլ շահերի հարաբերական բախման փուլեր: Թուրքիան ռազմաքաղաքական զգալի աջակցություն է ցուցաբերել Ադրբեջանին, ինչը ընդգծում է Անկարայի համար Բաքվի բացառիկ նշանակությունը՝ այդ հարաբերությունների առանցքը բնութագրելով «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսով: Միևնույն ժամանակ, թուրք-ադրբեջանական առևտրատնտեսական համագործակցությունը ներառում է տնտեսության գրեթե բոլոր կարևորագույն ոլորտները: Թուրքիան կարողացավ առավելագույնս օգտագործել ադրբեջանական էներգակիրները թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական նպատակներով,

որոնք տարածաշրջանային առաջատարի վերածվելու Թուրքիայի քաղաքականության համար հենքային նշանակություն ունենին: Թուրքիային հաջողվեց Վրաստանին և «ներառել» իր տարածաշրջանային քաղաքականության մեջ: Դրա հետևանքով աստիճանաբար ձևավորվեց Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան դաշնակցային առանցքը: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցումը հեռանկարային է Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա եռյակի կապերի զգալի ամրապնդման տեսակետից, սակայն դեռևս չունի աշխարհաքաղաքական նշանակություն:

➤ Թուրքիայի և Ադրբեջանի միջև լուրջ հակասություններ դրսևորվեցին 2008թ. ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորման արձանագրությունների ստորագրումից հետո: Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից մեկը՝ տարածաշրջանի պետություններն իրեն կենսական կապերով կապելը, անհաջողության մատնվեց Ադրբեջանի պատճառով, որի հետևանքով տարածաշրջանային տերությանը հատուկ արտաքին քաղաքականություն վարելու փոխարեն Թուրքիան հանդես է գալիս ադրբեջանական շահերի պաշտպանությամբ: Թուրքիան հարկադրված եղավ ընտրություն կատարել երկու կարևոր առաջնահերթությունների միջև. Հարավային Կովկասում տարածաշրջանային տերության կարգավիճակի, կամ էներգետիկ ռեսուրսների վերահսկողության առումով: Արդյունաբերված, առաջինի ձախողումն արդեն ակնհայտ է, երկրորդի հեռանկարը՝ մշուշոտ:

➤ Թուրքիայում և Վրաստանում Ռ. Թ. Էրդոգանի և Մ. Սահակաշվիլիի գլխավորած կուսակցությունների իշխանության գալը և տարածաշրջանում ի հայտ եկած նոր աշխարհաքաղաքական իրողությունները մեծապես նպաստեցին թուրք-վրացական հարաբերությունների մերձեցմանը և համագործակցության խորացմանը, հատկապես, տարածաշրջանային ռազմավարական ծրագրերի իրականացման և Թուրքիայի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման ուղղությամբ: Չնայած վրաց-ռուսական հնգօրյա պատերազմի ժամանակ թուրք-վրացական հարաբերություններում առաջացած լարվածությանը, փոխադարձ անվստահությանն ու դժգոհությանը, այնուամենայնիվ, Վրաստանը շարունակում է կարևոր դերակատարություն ունենալ Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության մեջ:

➤ Թուրք-վրացական տնտեսական և քաղաքական համագործակցությունը վերջին տասնամյակի ընթացքում վերելք է ապրում և Վրաստանը

Թուրքիային տարածաշրջանում դիտարկում է որպես ռազմավարական գործընկեր, իսկ Թուրքիան Վրաստանին համարում է կամուրջ դեպի Հարավային Կովկաս և Միջին Ասիա: Թուրքիան Վրաստանի համար հանդիսանում է ռազմավարական ու առևտրա-տնտեսական հիմնական գործընկեր՝ տարեցտարի մեծացնելով իր ռազմաքաղաքական և տնտեսական ազդեցությունը Վրաստանում և, հատկապես, Աջարիայի տարածքում:

➤ 2008թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի այցով Հայաստան երկխոսության նոր փուլ սկսվեց երկկողմ հարաբերությունների կարգավորման համար, ինչը մեծ արձագանք ստացավ Հայաստանում և Սփյուռքում: Այս քաղաքականությունը ոչ միայն իր բացասական անդրադարձը ունեցավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի վրա, այլև առաջացրեց մեծ լարվածության Հայաստանի իշխանությունների ու Սփյուռքի միջև Ցեղասպանության հարցում: Չնայած ԱԶԿ-ի իշխանության տարիներին Թուրքիայի ղեկավարության հայտարարություններին՝ բարելավելու հայ-թուրքական հարաբերությունները, այնուամենայնիվ, պաշտոնական Անկարան մինչ օրս շարունակում է նախապայմաններ թելադրել՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կապելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի և հայ-թուրքական ներկայիս սահմանի ճանաչման հավաստման հետ:

➤ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը Թուրքիայի կողմից ընկալվում է որպես իրական վտանգ, իսկ դրա դեմ պայքարը կարևոր տեղ ունի Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում: Հայոց ցեղասպանությունը ժխտելուն ու միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելուն ուղղված Թուրքիայի պետական քաղաքականությունը շարունակվում է հետևողականորեն կիրառվել:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում.**

1. **Արշակյան Գ.**, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ., Երևան, 2009, 210 էջ:

2. **Արշակյան Գ., Եղիազարյան Ա.**, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ փլուզումից հետո. Մաս առաջին, Երևան, 2014, 216 էջ:

3. **Արշակյան Գ.**, Թուրքիայի գործունեությունը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի նախապատրաստական աշխատանքների գործընթացում:

ցում, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», (հոդվածների ժողովածու), 3, Երևան, 2006, էջ 42-47:

4. Արշակյան Գ., Թուրքիայի ուղղափառ քաղաքական հարաբերությունները Վրաստանի հետ 1995-2001թթ., *Հայկական բանակ*, 4 (54), Երևան, 2007, էջ 7-18:

5. Արշակյան Գ., «Երկնագույն հոսք» գործարքը որպես ռուս-թուրքական մերձեցման նախադրյալ, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», (հոդվածների ժողովածու), 4, Երևան, 2007, էջ 23-29:

6. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Արխագիան Թուրքիայի ուղղափառական շահերի համատեքստում, *21-րդ դար*, 6 (34), Երևան, 2010, էջ 15-25:

7. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Վրաց-արխագական հակամարտությունը և հայկական գործոնը, «21-րդ դար», 4 (38), Երևան, 2011, էջ 54-66:

8. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրք-ադրբեջանական ուղղափառական հարաբերությունները 1991-2001թթ., «21-րդ դար», 5 (45), Երևան, 2012, էջ 34-49:

9. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008թթ., «21-րդ դար», 6 (46), Երևան, 2012, էջ 35-54:

10. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականության առաջնահերթություններն Անդրկովկասում 2008-2011թթ. և թուրք-ադրբեջանական հարաբերությունները, «21-րդ դար», 1 (47), Երևան, 2013, էջ 57-77:

11. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրք-վրացական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության, «21-րդ դար», 2 (48), Երևան, 2013, էջ 41-59:

12. Արշակյան Գ., Օգոստոսյան ռուս-վրացական պատերազմի ազդեցությունը թուրք-վրացական հարաբերությունների վրա, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1, Երևան, 2014, էջ 137-155:

13. Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականության հիմնական սկզբունքները Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1991-1994 թթ., *ԵՊՀ Հայագիտության հարցեր հանդես*, 3, Երևան, 2014, էջ 21-33:

14. Аршакян Г., Энергетические и транспортные проекты на Южном Кавказе в контексте региональной политики Турции, «The Fifth International

conference on development of historical and political sciences in Eurasia». Proceedings of the Conference (July 25, 2015). «East West» Association for Advanced Studies and Higher Education GmbH., Vienna (Austria), 2015, pp. 49-53.

15. Արշակյան Գ., Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը և Թուրքիա-Իսրայել յարաբերությունները, *Հայկազեան հայագիտական հանդես*, 35, Պէյրուֆ (Լիբանան), 2015, էջ 583-604:

16. Аршакян Г., Основные направления турецко-грузинских отношений в контексте региональной политики Турции в начале XXI в.,- *Проблемы Национальной Стратегии*, № 6 (33), Москва (Россия), 2015, сс. 122-143.

17. Արշակյան Գ., ՀՀ-Թուրքիա հարաբերությունները ԼՂ հակամարտության լույսով. 1991-1994 թվականներ, *Հայկական բանակ*, 4 (86), Երևան, 2015, էջ 78-86:

18. Torosyan T., Arshakyan G., Turkey's Modern Foreign Policy: New Challenges and New Opportunities, *Armenian Journal of Political Science*, 2(3), Yerevan, 2015, pp. 73-90.

19. Արշակյան Գ., ԽՍՀՄ փլուզումը և Թուրքիայի հարակովկասեան քաղաքականության ձեւաւորման գործընթացը 1990ականներին, *Հայկազեան հայագիտական հանդես*, 36, Պէյրուֆ (Լիբանան), 2016, էջ 349-372:

20. Արշակյան Գ., Թուրք-հայկական հարաբերությունները Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակի պայմաններում, *ԵՊՀ Հայագիտության հարցեր հանդես*, 2(8), Երևան, 2016, էջ 3-21:

21. Արշակյան Գ., Թուրք-հայկական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 1995-2001թթ., *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2 (647), Երևան, 2016, էջ 12-26:

22. Արշակյան Գ., Թուրք-ռուսաստանյան հարաբերությունները Հարավային Կովկասում 2002-2016թթ. Թուրքիայի վարած քաղաքականության համատեքստում, *Հայկական բանակ*, 2 (88), Երևան, 2016, էջ 83-96:

23. Թորոսյան Տ., Արշակյան Գ., Ռուս-թուրքական հարաբերությունների աշխարհաքաղաքական ասպեկտը. մրցակցություն, թե՛ համագործակցություն, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1(5), Երևան, 2016, էջ 5-34:

24. Արշակյան Գ., Ռուսաստանի ուղղափառական ներկայությունը Վրաստանում և Հայաստանում թուրք-ռուսական մրցակցության համատեքստում, *Բազմակից հայագիտական-բանասիրական-գրական հանդես*, ՃՀԴ տարի, թիվ 3-4, Վենետիկ, Ս. Ղազար (Իտալիա), 2016, էջ 131-152:

25. Arshakyan G., New Manifestations of the Denial of the Armenian Genocide in Turkey's State Policy, *Journal of Armenian Studies*, 3 (12), Yerevan, 2016, pp. 146-157.

26. Արշակյան Գ., Թուրք-ռուսական հարաբերությունները հետխորհրդային առաջին տասնամյակում և Հարավային Կովկասը, *Հրաբեր հասարակական գիտությունների*, 3(651), Երևան, 2017, էջ 80-98:

27. Արշակյան Գ., Թուրք-հայկական յարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության եթնախորքում (մինչև 2008 օգոստիսի ռուս-վրացական «Նագորեայ պատերազմ»-ը), *Հայկազեան հասարակական հանդես*, 37, Պէդրոս (Լիբանան), 2017, էջ 367-394:

РЕГИОНАЛЬНАЯ ПОЛИТИКА ТУРЦИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В ПЕРИОД ПРЕБЫВАНИЯ У ВЛАСТИ ПАРТИИ «СПРАВЕДЛИВОСТЬ И РАЗВИТИЕ»

Диссертация на соискание ученой степени доктора политических наук по специальности 23.00.02 - «Политические институты и процессы, международные отношения».

Защита состоится 15 июня 2018 г., в 15:00, на заседании специализированного совета ВАК РА 056 «Политология» при Национальном исследовательском университете обороны МО РА (ул. К. Улнеци 56/6, 0037, г. Ереван, Республика Армения).

РЕЗЮМЕ

В результате развала Советского Союза создалась совершенно новая обстановка не только на территории бывшего социалистического лагеря, но и во всем мире, так как она привела к развалу двухполярного миропорядка. Эта ситуация предоставила Турции новые стратегические возможности для активного проникновения на Южный Кавказ, который представляет собой не только большую геополитическую и экономическую важность для Анкары, но и рассматривается в качестве своеобразного моста в недавно обретшие независимость тюркские государства Центральной Азии. Однако попытки Турции обосноваться и укрепить свое геополитическое присутствие на Южном Кавказе и в Центральной Азии обернулись неудачей, главными причинами которой были недостаточный экономический и геополитический потенциал, применение жестких методов, а позднее, сильное противостояние России подобным стремлениям.

После того, как партия «Справедливость и развитие» пришла к власти, в Турции была разработана новая концепция внешней политики, целью которой было достижение статуса региональной державы. С этой точки зрения политика Турции особенно активна на Южном Кавказе, так как развал СССР предоставил возможность открытия новых путей транспортировки энергоносителей из региона в Европу и значительного уменьшения российского влияния.

Всестороннее исследование данной темы, с одной стороны, дает возможность раскрыть особенности, вызовы и перспективы региональной политики, проводимой Турцией в отношении стран Южного Кавказа, а также выявить ее позицию в отношении существующих в регионе конфликтов, энергетических и транспортных стратегических проектов, а с другой стороны - выявить особенности военно-политических и торгово-экономических отношений конкуренции и сотрудничества Турции с Россией.

Диссертация состоит из введения, пяти глав, которые, в свою очередь, делятся на 15 подглав, заключения, списка использованной литературы и источников.

Во введении представлены актуальность изучения темы, степень научной разработанности исследования, объект и предмет исследования, цели и задачи, методологию, научная новизна, теоретическое значение диссертации и возможности практического применения.

Первая глава диссертации - «**Предпосылки формирования внешней политики Турции, вызовы и перспективы на текущем этапе**» - состоит из трех подглав, где представлены предпосылки, цели и теоретические основы значительных изменений, произошедших во внешней политике Турции по причине развала СССР и возникновения новой геополитической ситуации.

Во второй главе под названием «**Турецко-российские конкурентные/партнерские отношения на Южном Кавказе после развала СССР**», исследуются этапы развития и особенности турецко-российских отношений, подчеркиваются ключевые направления двустороннего сотрудничества и способствующие им факторы, а также основные противоречия, существующие в турецко-российских отношениях и их конкурентные плоскости.

В третьей главе диссертации под названием «**Азербайджан как ключевой партнер Турции на Южном Кавказе**», тщательно исследуется формирование и развитие турецко-азербайджанских отношений, их роль и значение в контексте региональной политики Турции на Южном Кавказе.

Четвертая глава под названием «**Грузия как ворота для Турции на Южный Кавказ**», состоит из трех подглав, в которых расследуется процесс развития турецко-грузинских отношений, ключевые сферы двустороннего сотрудничества, а также позиция Турции в отношении грузино-абхазского конфликта.

Последняя, пятая, глава диссертации с заголовком «**Турецко-армянские отношения после развала СССР**» состоит из трех подглав, в которых исследуются основные особенности армяно-турецких отношений за последнюю четверть века, антиармянские проявления политики Турции за весь период карабахского противостояния, а также анализируются попытки улучшения отношений между двумя странами и основные причины их провала.

В заключении представлены основные результаты исследования, выводы и предложения, имеющие теоретическое и практическое значение.

Основные тезисы диссертации отражены в 2 монографиях и 25 научных статьях.

## TURKISH REGIONAL POLICY IN THE SOUTH CAUCASUS UNDER THE RULE OF "JUSTICE AND DEVELOPMENT" PARTY

Dissertation under the specialization of 23.00.02 - "Political Institutions and Processes, International Relations" aspiring to earn a Doctoral Degree in Political Sciences.

The public defense of the dissertation will take place on 15 June, 2018, at 15:00 in the National Defense Research University, MOD, RA at HAC Specialization Chamber session. (Address: 56/6 K. Ulnetsi Str., 0037, Yerevan, Republic of Armenia).

### ABSTRACT

The collapse of the Soviet Union created a completely new situation not only in the former Soviet space but in the whole world as it led to the collapse of bipolar world order. This situation provided Turkey with new strategic opportunities to actively penetrate into the South Caucasus, which is not only of geopolitical and economic significance for Ankara, but is also seen as a unique bridge to the newly independent Turkic states of Central Asia. However, Turkey's attempts to establish and firmly strengthen its geopolitical presence in the South Caucasus and the Central Asia failed mostly due to the insufficient economic and geopolitical potential of Turkey, the tough methods used, and later Russia's harsh counter-reaction to such ambitions.

After the AKP came to power, a new foreign policy concept was developed in Turkey aimed at gaining the regional power status. From this point of view, Turkey's policy was particularly active in the South Caucasus since it provided greater opportunities for the realization of Ankara's ambitions due to the collapse of the Soviet Union, prospects for the development of energy transportation routes to Europe, and in terms of considerably reducing the Russian influence.

The comprehensive study of the topic reveals the peculiarities, challenges and perspectives of Turkey's regional policy towards the countries of the South Caucasus, as well as Turkey's position on the regional conflicts, energy and transport projects. The study also presents the peculiarities of Turkey's military-political and trade-economic relations within the combination of competition and cooperation with Russia.

The doctoral thesis consists of the introduction, five chapters, 15 subchapters, conclusion, list of references and bibliography.

The introduction introduces the modernity of the subject matter, the degree of scientific development of research, the subject and the object of the research, its aim and problems, methodology, scientific novelty, as well as theoretical significance of the thesis and its practical applicability.

The first chapter of the thesis entitled **"Turkey's foreign policy formation: preconditions, challenges and perspectives"** consists of three subchapters presenting the preconditions, goals and theoretical bases of the significant changes in Turkish foreign policy due to a new geopolitical situation created after the collapse of the USSR.

The second chapter of the thesis entitled **"Turkish-Russian competitive/cooperative relations in the South Caucasus after the collapse of the USSR"** examines the stages of development of the Turkish-Russian relations and their peculiarities in the last quarter-century, clarifying the major directions of bilateral cooperation, the factors contributing to them, as well, as the main contradictions and competitive dimensions in Turkish-Russian relations.

The third chapter of the thesis entitled **"Azerbaijan as a key partner of Turkey in the South Caucasus"** addresses the establishment and development, as well as the role and importance of the Turkish-Azerbaijani relations in the context of Turkey's regional policy in the South Caucasus.

The fourth chapter entitled **"Georgia as the gate for Turkey to the South Caucasus"** is composed of three subchapters focusing on the development of the Turkish-Georgian relations, key spheres of bilateral cooperation, as well as Turkey's stance in the Georgian-Abkhazian conflict.

The fifth chapter of the thesis entitled **"Turkish-Armenian relations after the collapse of the USSR"** consists of three subchapters examining the main peculiarities of the Armenian-Turkish relations during the last quarter-century, the manifestations of anti-Armenian policy of Turkey throughout the Nagorno-Karabakh conflict, as well as the attempts to normalize relations between the two countries and the main reasons for their failure.

Conclusion presents the main results of the research, inferences and recommendations of theoretical and practical significance.

The main provisions of the thesis are reflected in 2 monographs and 25 scientific articles.

ՀՀ Ազգային գրադարան



NL1143540

